Ազգ

AZG
armenian newspaper

Յուլիս 24. 1991
Շաբաթ
հայերեն թերթ
Ա տարի. թիվ 46
գինը 30 կ.

հասցէ՝ Երևան 375010
Հանրապետության 47
հեռախոս՝ 581841
ֆաքս՝ 582941
տելեքս՝ 243267 SULA SU

ՀԱՍՍՀ-ԱրմՍՍՀ

«Գերագույն իշխանությունները» չեն պահում խոստումները

Շարունակվում են Շահումյանի հայկական գյուղերի գնդակոծումները

Շահումյանի երջանի Էրմեջ գյուղում հուլիսի 21-ին սկսած մարտը ծավալվելով հասել է նաև Վերիշեն, որը երջանի ամենամեծ հայաբնակ գյուղն է: Գյուղերը գնդակոծվում են տանկերից և ռադիոհրանոցներից: Վերջիններս ոչնչացվում են գյուղերի վրա մոտ 40-50 մետր բարձրությամբ: Գյուղերի երջակայքում զինվորական ուղղաթիռներից իջեցվել են դեսանտայիններ, որոնք մարտի են բռնվել անտառում ծվարած տեղարբնակների հետ: Հուլիսի 23-ի նախնական տեղեկությունների համաձայն, կան կորուստներ երկու կողմից, սակայն դրանց թիվը ճշգրտել անհնար է, քանի որ մարտերը շարունակվում են և գործողությունները կատարվում են անտառներում: Հայաստանի հանրապետության կողմից կատարված հարցադրումներին Խորհրդային կենտրոնական իշխանությունները պատասխանում են մի բան, սակայն անում՝ հակառակը: Հայ բանչության տեղահանությունը փաստորեն շարունակվում է Ադրբեջանի տարածքում:

Հայաստանի ռամկավար ազատական կուսակցության հիմնադիր խորհրդի հայտարարությունը

Օրեկ, հուլիսի 23-ին, Հայաստանի հանրապետության Գերագույն խորհրդի նիստի ընթացքում, պատգամավոր Պետրոս Քաջախյանը ՀՌԱԿ Հիմնադիր խորհրդի անունից ընթերցեց հետևյալ հայտարարությունը, որն ընդունվեց ծափահարությամբ:

Հայաստանի հանրապետության Գերագույն խորհրդում «Սահմանադրական խումբ» կազմակերպությունը ներկայացնող պատգամավորներ Պետրոս Քաջախյանը և Վարդան Պետրոսյանը, կազմակերպության ինքնալուծարումից հետո, անդամագրվել են Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությանը:

Այսուհետև Հայաստանի հանրապետության Գերագույն խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ Հայաստանի ռամկավար ազատական կուսակցության դիրքորոշումը ներկայացնելու են ՀՌԱԿ-ի Հիմնադիր խորհրդի անդամներ հանդիսացող պատգամավորներ Պետրոս Քաջախյանը և Վարդան Պետրոսյանը:

Հայաստանի ռամկավար ազատական կուսակցության Հիմնադիր խորհուրդ



Նովո-Օգարյովոյի նոր հավաքը

Երեքշաբթի, հուլիսի 23, Նովո-Օգարյովո: Այստեղ ընթանում է լիազորված պատվիրակությունների ներկայացուցիչների հանդիպումը, որի ժամանակ վերջնական մշակման է ենթարկվելու Միութենական պայմանագրի տեքստը: Հանդիպմանը, ինչպես հաղորդում է «ԻՏԱ»-ի թղթակիցը, մասնակցում են միութենական ինքնիշխան պետությունների և նրանց կազմի մեջ մտնող հանրապետությունների ղեկավարները, որոնք մասնակցել են Միութենական պայմանագրի տեքստի մշակման նախնական փուլին:

Խորհրդակցության աշխատանքին մասնակցում են ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովը, ԽՍՀՄ վարչապետի առաջին տեղակալ Վ. Շչերբակովը, ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Ա. Բեսմերտնիխը, ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Յազովը, Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինը, Բելոռուսիայի Գերագույն խորհրդի նախագահ Ն. Դեմենտեյը, Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևը, Ուզբեկստանի նախագահ Ի. Քարիմովը, Կիրգիզստանի նախագահ Ա. Ակաևը, Տաջիկստանի նախագահ Ռ. Մախկամովը, Թուրքմենիայի նախագահ Ս. Նիյազովը, Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը:

Ուկրաինան ներկայացնում է հանրապետական խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ Ի. Պլյուշը: Հանդիպմանը մասնակցում է նաև Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը: ■

Տանջարարները Թուրքիայում

Այս օրերին, երբ միջազգային մամուլը հատուկ ուշադրություն է նվիրում Բուշի Հունաստան և Թուրքիա կատարած այցին, ամերիկյան մամուլը հատկապես լայն տեղ է տալիս մարդու իրավունքների հարցերին՝ Թուրքիայում: Վկայակոչելով միջազգային ու տեղական համարձակախոսի խմբերի տեղեկագրերը, ամերիկյան մամուլը նշում է, որ հունվարից ի վեր թուրքական բանտերում արձանագրվել են մարմնական տանջանքի առնվազն 200 դեպք, որ գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշները:

«Նյու Յորք թայմզ» թերթն իր հուլիսի 20-ի համարում այս պարագան բացատրում է ահաբեկիչների դեմ պայքարելու համար թուրքական ոստիկանությանը տրված նոր արտոնություններով: Թերթը գրում է, որ նախագահ Բուշը Պարսից ծոցի պատերազմի ընթացքում Թուրքիայի կազմից դաշնակիցներին տրված «անգնահատելի» ծառայությունները ծափահարելու հետ մեկտեղ, ստիպված է գոնե նախագահ Օզալի ականջին ասել մարդու իրավունքների ամենակոպիտ խախտումների մասին:

Թերթը նշում է, թե հակառակ այն փաստին, որ վերջերս թուրքական կառավարությունը երկրում ապրող բոլոր ազգերին չի կոչում «լեռնաբնակ թուրքեր» և բոլորատում է նրանց փողոցներում գործածել իրենց մայրենի լեզուն, սակայն հակաահաբեկչական պայքարի անվան տակ ամենաբիրտ միջոցներով պատժվում են բոլոր նրանք, ովքեր պաշտպանում են մարդկային իրավունքները և կամ տարածում բոլոր լեզու գրականություն:

Թուրքիան մարդու իրավունքների խախտման ամոթալի հաշվեկշիռ ունի, գրում է թերթը, և վերջին պատերազմի ընթացքում իրանաբնակ բոլորին աղաստան տալը չի կարող ծածկել իր սեփական տարածքում ապրողների նկատմամբ կիրառած տանջարարների քաղաքականությունը: ■

Նոր ընդհարումներ են բորբոքվում Խորվաթիայում

Մինչ Սլովենիայում երեք օրաթ առաջ հաստատված զինադադարը գոյատևում է ընդհանրապես, անկախության ձգտող մյուս հանրապետությունում՝ Խորվաթիայում վերսին բորբոքվեցին կռիվները:

Տեղաբնակ սերբական միլիցիայի ու դաշնակցային բանակի ստորաբաժանումների հետ խորվաթական ազգային ուժերի մղած կռիվներում, վերջին երկու օրերի ընթացքում սպանվել են 30 հոգի, 110-ի հասցնելով մայիսից ի վեր այդ հանրապետությունում զոհվածների թիվը:

Տեղ-տեղ մարտերն այնքան ծանր են եղել, որ փակվելու է Արևմտյան Եվրոպան Թուրքիային կապող երկաթուղին:

Նոր բռնկումների պատճառ է հանդիսանում տեղական ազգային ուժերին զինաթափելու հարավսլավական կենտրոնական իշխանության որոշումը:

Ըստ միջազգային դիտորդների, ամեն ինչ պատրաստ է երկրում քաղաքացիական արյունալի պատերազմի համար: ■

Միջինարևելյան խաղաղության հարցով Բեյքերը ճնշում է գործադրում Շամիրի վրա

Դամասկոս այցելելուց հետո, որն իր միջինարևելյան նոր երջադության առաջին հանգրվանն էր և որտեղ դրական պատասխան էր ստացել Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադից, ԱՄՆ-ի պետքարտուղար Ջեյմս Բեյքերը հուլիսի 21-ին հասավ Իսրայել և նույն օրն ընդունվեց վարչապետ Իցհակ Շամիրի կողմից, նրանից պահանջելով չխոչընդոտել Միջին Արևելքում խաղաղության ամերիկյան ծրագիրը:

Հուլիսի 22-ին Շամիրը կարինետի նիստում Ջ. Բեյքերի առաջարկների մասին լուսաբանություններ տվեց և նախագահ Ասադի դիրքորոշումը կոչեց «հեղափոխական փոփոխություն» Իսրայելի նկատմամբ: Նա նշեց, որ ամերիկացի բանագնացն իրենից պահանջել է ընդունել ամերիկյան այն ծրագիրը, որ առաջադրում է խաղաղության խոսակցություններում ընդգրկել միայն Արևմտյան ափի և Գազայի պաղեստինցիներին, որ Իսրայելը պետք չէ կորցնի արաբների հետ դեմոդեմ խոսելու «պատմական առիթը»:

Այսուհանդերձ, Իսրայելի վարչապետը մինչև երեկ գիտեր չէր բացահայտել իր երկրի դիրքը ամերիկյան նոր նախաձեռնության կապակցությամբ:

Իրենց հերթին, ինչպես գրում էր *«Նյու Յորք Ջրոնըլ»* ամերիկյան օրաթերթն իր երեկվա համարում, ամերիկյան բազմաթիվ սենատորներ ուժեղացրել են ճնշումը Թել-Ավիվին մոտիկ հրեական լոբիի վրա, բացահայտ խոսելով այն մասին, թե ոտով Իսրայելի պետությունը 10 միլիարդ դոլլարի վարկ է խնդրելու Վաշինգտոնից ԽՍՀՄ-ից գաղթող հրեաներին տեղավորելու համար:

Իր հերթին, անվտանգության գծով նախագահ Ջորջ Բուշի խորհրդական Սքաուքրոֆթը երեկ հայտարարեց, թե Սադիսակ տան պետը ցանկանում է, որ Թել-Ավիվը հասակեցնի իր դիրքը խաղաղության ամերիկյան ծրագրի կապակցությամբ, նախքան առաջիկա երկուշաբթի օրը պաշտոնական այցով Մոսկվա ժամանելը, որտեղ հանդիպելու է նախագահ Գորբաչովին:

Մյուս կողմից, Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը, որ մեծ գովեստով էր արտահայտվել սիրիացի իր պաշտոնակցի՝ խաղաղության ի նպաստ դիրքորոշման մասին, հայտարարելով, որ այն կոչված է նեղ կացության մատնել Իսրայելին, արաբական երկրներին կոչ արեց վերացնել տնտեսական բոյկոտը Իսրայելի նկատմամբ՝ գրավյալ հողերի վրա հրեական նոր բնակեցումներ չհաստատելու հանձնառության դիմաց: Սաուդյան Արաբիան պաշտոնապես համաձայնություն տվեց այդ կոչին: Նրան հետևեց Հորդանանը, իսկ Լիբանանը գրավոր կերպով իր համաձայնությունը տվեց ամերիկյան խաղաղության ծրագրին:

Ավելացնենք նաև, որ ըստ Մոսկվայում դիվանագիտական երջանակների, ակնկալվում է, որ առաջիկա շաբաթ Միջին Արևելքի երկրներ այցելի նաև արտգործնախարար Ալեքսանդր Բեսմերտնիխը: ■

Գորբաչովը հրաժարվելո՞ւ է մարքսիզմ-լենինիզմից

Ըստ հավաստի աղբյուրների, նախագահ Մ. Գորբաչովն էլ որոշել է հայտարարել «հրաժարումն ի սատանայէ»:

Այդպես, վաղը Մոսկվայի համագումարների պալատում բացվելիք Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի պլենումում, պարզվում է, որ գլխավոր քարտուղարը հայտարարի, թե հրաժարվում է ԽՍՀՄ-ում յոթ տասնամյակ իշխած գաղափարախոսությունից՝ մարքսիզմ-լենինիզմից, փոխարենը ընդունելով սոցիալ-դեմոկրատական սկզբունքները:

Ըստ «Նեզավիսիմայա գազետա» թերթի, իր գրավոր զեկուցման մեջ Գորբաչովը դատապարտելու է Կոմկուսի անցյալի գործունեությունը, նրա ճնշման ու հալածանքների քաղաքականությունը: ■

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ

Իրանը նեռում շնորհեց բանակի դասալիքներին ու կառավարության ընդդիմադիրներին, երկրի ներսում բարձրացող դժգոհությունների ալիքը մեղմելու հույսի նպատակով:

Մյուս կողմից, երկրի քաղաքական շրջաններում հաստատված միջազգային օգնության կազմակերպիչները երկուշաբթի օրը հաղորդեցին, թե ավելի քան 20 հազար քուրդ Սուլեյմանիյեի շրջանից փախչում են դեպի Իրան, այդ շրջաններում իրավիճակի զորի կուտակումներից խույս տալով:

Լոս Անջելեսի ոստիկանապետը որոշել է թոշակի անցնել առաջիկա տարվա ապրիլին, որպես հետևանք իր վրա գործադրվող հասարակական ճնշումների: 64 տարեկան ոստիկանապետը՝ Դեյվիդ Գեյթը, մարտի 2-ի տեսագրված դեպքի կապակցությամբ, որի ընթացքում նրա ոստիկանները բռնորեն խոշտանգում էին մի նեգր վարորդի, մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների կողմից անընդհատ պախարակվում է:

Հարավային Աֆրիկան ընդունեց, որ գաղտնորեն 700 հազար դոլլար է վճարել զուլուների ցեղի Ինքաթա շարժմանը, նրանց թե պահելու համար Աֆրիկյան Ազգային Կոնգրեսի որոշումներից:

Կիպրոսի նախագահը խաղաղական ավելի մեծ արտոնություններ խոստացավ կիպրոսցի թուրք համայնքին, որ կազմում է կղզու բնակչության հազիվ 18 տոկոսը:

Նախագահ Վասիլիուն, օգտվելով նախագահ Բուշի Հունաստան և Թուրքիա կատարած այցից, իր այդ նախաձեռնության դիմաց պահանջեց բոլոր կիպրացիների համար երթևեկի և սեփականության իրավունք ամբողջ երկրի տարածքով մեկ: ■

Միջհանրապետական խորհրդակցություն Մոսկվայում

Այն կազմակերպել են Ռուսաստանի վարչապետ Իվան Սիլաևը և Ռուսաստանյան Ֆեդերացիայի արտաքին տնտեսական կապերի նախարարությունը:

Նախարարության հաղորդագրության մեջ ասվում է, որ խորհրդակցությանը մասնակցում են բոլոր 15 հանրապետությունների պատվիրակությունները՝ արտաքին տնտեսական գերատեսչությունների ղեկավարների գլխավորությամբ:

Խորհրդակցությունում խոսք կգնա այն մասին, թե ինչպես են համագործակցելու հանրապետական կառավարությունները արտաքին տնտեսական ասպարեզում՝ քաղաքական և տնտեսական անկախություն ձեռք բերելու և տնտեսավարության ազատական ուղուն անցնելու պայմաններում:

Ինչպես տպավորվում է, խորհրդակցության ընթացքում կստորագրվեն մի շարք միջհանրապետական պայմանագրեր՝ արտաքին տնտեսական ասպարեզում համագործակցելու վերաբերյալ: Այսօրվա դրությամբ նմանատիպ պայմանագրեր են կնքել Ռուսաստանի արտաքին տնտեսական կապերի նախարարությունը Բելոռուսիայի և Ղազախստանի արտաքին տնտեսական գերատեսչությունների հետ:

Խորհրդակցությունը կավարտվի հուլիսի 27-ին: ■

Ջավախքցիները մերժում են Գամսախուրդիայի նշանակած պրեֆեկտին

Հուլիսի կեսերին պրն. Զ. Գամսախուրդիայի հրամանով Ախալքալաքի երջանի պրեֆեկտ է նշանակվել պրն. Ինասարիձեն, որը նախկինում աշխատել է երջանի ՊԱԿ-ի բաժանմունքի պետ, իսկ հետագայում աշխատում էր Վրաստանի ՊԱԿ-ի համակարգում: Երջանի լիազոր ներկայացուցիչների ժողովը իր պահանջներն է ներկայացրել պրեֆեկտին, որոնք չեն ընդունվել: Ժողովը, ի պատասխան դրա, միաձայն մերժեց պրեֆեկտին: Լիազոր ներկայացուցիչների ժողովը հրապարակել է կոչ՝ ուղղված Ջավախքի հայությանը: ■

digitised by A.R.A.R.@

Վարդան ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. «Մի բան է ինձ տանջում. ինչպե՞ս վերադարձնել մեր տղաներին»

Յուլիսի 19-ին, Գեսաբենում մայիսի ընկերներին գերեվարված լրագրող Վարդան Հովհաննիսյանի ազատելու լուրն առնելուն պես շտապեցի նրա մոտ: Վարդանին ու ծվեսանա Պասքալեային՝ բուլղարացի լրագրողին, որի անունը հայտնի դարձավ մեզ «Մոսկովսկիե նովոստի»-ում Վարդանի մասին տպագրված նրա հոդվածից հետո, եւ որն այդքան բան արեց մեր գործընկերոջ ազատման համար, ուղեկցեցի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ, ուր նրանց ընդունեց փոխնախագահ Բարկեն Սարգսյանը: Տեղի ունեցան հանդիպումներ Վազգեն Սարգսյանի, մարդու իրավունքների հանձնաժողովի անդամների, հին ու նոր ծանոթների հետ, որոնցից շատերը դժվարությամբ էին հավատում, որ Վարդանը վերջապես ազատ է:

«Ո՞նց ես» հարցին նա ժպտալով պատասխանում էր. «Լավ եմ»: Այն մասին, թե ինչ է պարել 23-ամյա այդ տղան ադրբեջանական բանտում, կռահում էինք նրա մի պահ սառչող հայացքից:

Փառք Աստված, մեր ընկերը մեզ հետ է, խորին շնորհակալություն հեռ, Ցվետանա, որ ոտքի հանեցիր աշխարհը Վարդանին ազատելու համար, մի մարդու, որի շնորհիվ աշխարհի կենտրոնում տեսավ Երասխի ճակատամարտը, 1990-ի մայիսի 27-ի դեպքերը, Արցախի գոհվածները ներկայացնող ժապավենները:

Բոլորս էլ հուզված էինք, սակայն ես չկարողացա հաղթահարել գայթակղությունս եւ հարցազրույց ունեցա Վարդանի ու Ցվետանայի հետ, ինչը ստորեւ ներկայացվում է ձեր ուշադրությանը:

Լուսանկարը՝ Ռ. ՄՍԵՂԱՍՍԱՐՅԱՆԻ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ձերբակալվեցիք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մայիսի 6-ին ինձ ձերբակալեցին բանակայիններ, տարան Գեսաբենի «գործողության» ղեկավար, Ադրբեջանի ներքին գործերի նախարարի տեղակալ Մամեդովի մոտ, որտեղ նախնական հետաքննություն անցկացվեց: Դրանից հետո տեղափոխվեցի Գյանջայի նախնական կալանքի խուցը, որտեղից 20 օր հետո կրկին տեղափոխվեցի նույն քաղաքի քննչական մեկուսարան: Մեկ ամսից ավելի ես ոչ մի լուր չունեի ձերբակալված մյուս հայերի մասին: Բանտում առավել ծանր էր նրանց վիճակը, ովքեր հենց սկզբից ընկել էին օմոնականների ձեռքը, եւ այնուհետեւ տեղափոխվել Գյանջա: Առաջին 8 -10 օրը նրանց ընդհանրապես չէին կերակրում, դաժանաբար ծեծում էին օրը մի քանի անգամ:

Վերջին 20 օրվա ընթացքում խոշտանգումները, որ մինչ այդ մշտական բնույթ էին կրում (օրը մի քանի անգամ), «մեղմացան»՝ օրը մեկ անգամ էին ծեծում:

Մոսկվայից տարբեր «բարձր» հանձնաժողովներ էին գալիս, հարցնում էին՝ բողոքներ ունե՞ք, եւ դա այն դեպքում, երբ տանջարարդ կանգնած է մեջքիդ եւ տեսնում: Հանձնաժողովները գալիս-գնում են, իսկ դու մնում ես «բրոնեպաղետների» հետ: Դե արի ու դրանից հետո ասա, թե «բողոքներ ունես»:

Հ. Քո կարծիքով, ո՞րն էր այդ «մեղմացման» պատճառը:

Պ. Հավանաբար դրսից ճնշումը: Մենք զգնվում էինք ինֆորմացիոն մեկուսացման մեջ: Մի անգամ քննչական մեկուսարանի պետը ցույց տվեց ինձ «Պրավդայի» այն համարը, ուր հերյուրանքներ էին գրված իմ մասին:

Հույսով լցվեցի, երբ ինձ այցելեց Ցվետանան: Կարծում եմ, որ մեծավ մասամբ իմ ազատությամբ պարտական եմ նրա կատարած հսկայական գործին:

Հ. Ինչպե՞ս հանդիպեցիք Ցվետանայի հետ:

Պ. Մոտ 25 օր ինձ ընդհանրապես չէին կանչում հարցաքննություններ: Մեկ էլ եկավ քննիչը, անսովոր-սարսափնակ ջերմ էր խոսում, հետո հարցրեց. *«Ուզո՞ւմ ես հանդիպել բողոքիցների հետ»*: Ես էլ իմ հերթին հարցրի. *«Ո՞ր բողոքիցների»*: «Դե, մեր «Ազերինֆորմ»-ի, արտասահմանյան այլ բողոքիցների»:

Բնազդաբար այդ «արտասահմանյան այլ բողոքիցները» ընկալվեցին որպես «Ազերինֆորմի» ինչ-որ մի մասնաճյուղի ներկայացուցիչներ, եւ ես այդ իսկ պատճառով հրաժարվեցի: Եւ եթե չլիներ Ցվետանայի հսկայական եռանդը, որը պնդեց մեր հանդիպման կայանալուն, ի՞նչ իմանամ, ինչպիսի՞ն կլիներ հետագա ճակատագիրս:

Ցվետանայի հետ զրույցից հետո ես, ինչպես արդեն ասացի, մեծ հույսով լցվեցի, որովհետեւ զգացի, որ նա ամեն ինչ կանի ինձ այստեղից ազատելու համար:

Հ. Ինչպե՞ս ստացվեց, որ քեզ ազատեցին:

Պ. Ես սպանում էի, թե երբ են ինձ ներկայացնելու «իսկական» մեղադրանքները, որովհետեւ 194-րդ հոդվածը, ըստ որի ես մեղադրվում էի կեղծ փաստաթղթեր օգտագործելու մեջ, նրանց համար շատ մեղմ էր: Գեսաբենում ինձ մի տեղեկանք էին տվել, թե ես գյուղի բնակիչ եմ, որ օմոնականները ինձ տեղնուտեղը չգնդակահարեն: Այդպիսի զգոնդակահարությունից ես հրաշքով փրկվեցի ապրիլի 30-ին, առաջին ձերբակալության ժամանակ: Ես լրագրող եմ, իսկ դա բոլոր ժամանակների եւ երկրների պատժիչների կողմից «ամենասիրված» թիրախն է:

Բացի այդ, ես միակ երեւանցին էի եւ շատ հարմար «փաստարկ էի» իրենց սիրած «Հայաստանից ներմուծված հայ գրոհայինների» վարկածը հաստատելու համար:

Երեկ ինձ հրավիրեցին, ստորագրել տվեցին Երեւանից չբացակայելու մի «պարտավորություն», խոսեցին «ժողովուրդների բարեկամության» մասին, ապա հայտնեցին, որ իմ կանխման միջոցը փոխված է, ես ազատ եմ արձակվում եւ որ դատաքննչական մարմինների առաջին իսկ կանչով պիտի ներկայանամ: Ապա տեղափոխեցին Ղազախ, Իջեւանի սահմանում ինձ հանձնեցին մերոնց: Մինչեւ վերջին պահը չէի հավատում, որ ինձ ազատում են, եւ այդ բոլորը երազ էր հիշեցնում...

Բանտում մնացել են 12 գեսաբենցիներ, 5-6 միլիցիոներներ, որ ձերբակալվել էին Ոսկեղարում եւ 2 շահումյանցիներ: Բանտի «աշխատողների» խոսակցություններից լսեցի, որ Շուշվա բանտում սարսափելի բաներ են տեղի ունենում, ավելի դաժան, քան թե Գյանջայում:

Մի բան է ինձ տանջում. ինչպես վերադարձնել մեր տղաներին, որոնք ադրբեջանական բանտում են:

Նրանց միակ հույսը Հայաստանն է:

Դատնում եմ Ցվետանային:

Հ. Ինչպե՞ս իմացաք Վարդանի մասին:

Պ. Վարդանի մասին կարդացի արտասահմանյան մամուլում: Ես այդ ժամանակ պատրաստվում էի գնալ Ղարաբաղ եւ որոշեցի անդայման օգնել Վարդանին: 7 օր գտնվում էի Ղարաբաղում, եւ փորձում էի իմանալ Ադրբեջանի իրավապահ մարմինների ներկայացուցիչներից, թե որտե՞ղ է Վարդանը, ի՞նչ վիճակում է: Արեւմտյան թերթերից մեկում կասկած էր հայտնվում՝ ո՞ղջ է արդյոք Վարդանը, քանի որ 1,5 ամիս ոչ մի լուր չէր եղել եւ բազում անգամներ ադրբեջանական կողմը մերժել էր լրագրողների, քաղաքական գործիչների, նույնիսկ կոնգրեսականների խնդրանքը՝ այցելել Վարդանին:

Չէր կարելի թույլ տալ, որ կորցնենք այդպիսի խիզախ գործընկերոջ:

Վերջապես իմացա, որ նա գտնվում է Գյանջայի բանտում: Ադրբեջանցիները խոստումներ էին տալիս Վարդանի հետ իմ հանդիպման վերաբերյալ, բայց այն հետաձգվում էր: Երբ իմ ինքնաթիռի թռիչքին մնում էր ընդամենը 2 ժամ, եւ ես արդեն չէի հավատում, որ կտեսնեմ Վարդանին, վերջապես, բազմաթիվ պնդումներից հետո, մեր հանդիպումը կայացավ:

Ես խորապես ցնցված էի այն տպավորությունից, որ ինձ վրա թողեց Վարդանը: Դա ամենաարժանավոր մարդն էր, որին ես հանդիպեցի Շուշվա եւ Գյանջայի բանտերում:

Հանգիստ եւ սթափ էր Վարդանը, 23-ամյա այդ տղան, ինչը որ այդ պայմաններում աննախադեպ էր:

Ես երդվեցի նրան, որ տագնապ կբարձրացնեմ արտասահմանյան եւ խորհրդային (նամանավանդ խորհրդային, որովհետեւ այն ոչ մի բան չէր գրել գործընկերոջ մասին) մամուլում, ամեն ինչ կանեմ իրեն ազատելու համար:

Գնացի *Նորությունների ինֆորմացիոն ծառայություն*, որի արտահասիֆային թղթակիցն էր Վարդանը, եւ ցաստմս հայտնեցի այն փաստի վերաբերյալ, որ նրանք փաստորեն հրաժարվել են նեղն ընկած իրենց աշխատակցից:

Փորձեցին դա բացատրել ինչ-որ կազմակերպչական հանգամանքներով, բայց, միեւնույն է, համոզիչ չէր:

Ասացի նրանց, որ պիտի դատապարտեն իրենց գործընկերոջը:

Վարդանի հետ իմ հարցազրույցի տեսաժապավենը ցուցադրվեց բուլղարական, հետագայում Եւրոպական հեռուստատեսությամբ: ԽՍՀՄ ներքգործնախարարի տեղակալ Գրոմովը խոստումներ էր տալիս, բայց դրանք դատարկ բաներ դուրս եկան:

«Մոսկովսկիե Նովոստի» թերթում հրապարակեցի հոդված Վարդանի մասին, ռուսատանյան հեռուստատեսությամբ հեռարձակվեցին տեղեկություններ նրա մասին: «Ազատություն» ռադիոկայանով երկու հաղորդում պատրաստեցի:

Ինձ զգալի օգնություն ցույց տվեցին ԽՍՀՄ լրագրողների միությունը եւ դրան կից Հրապարակայնության պաշտպանության Ֆոնդը, անձամբ նախագահ պրն. Մագալաեւը:

Նրանց միջոցով կարողացանք գտնել ռուս դատապաշտպան, վարել բանակցություններ Ադրբեջանի դատախազության հետ:

Հ. Ի՞նչ զգացիք այն պահին, երբ իմացաք, որ Վարդանը ազատված է:

Պ. Ես ինքս ինձ զգում էի ինչպես գորավարը՝ մեծ հաղթանակից հետո: Հավատս չի գալիս, իսկապես, ձեռք եմ տալիս Վարդանին, որ համոզվեմ... Երջանիկ եմ...

Հ. Նախկինում եղե՞լ եք Հայաստանում:

Պ. Սա իմ երկրորդ այցն է Հայաստան, ինձ շատ է հուզում Ղարաբաղի հայության ճակատագիրը:

Ընդհանրապես ես չեմ կարող անտարբեր մնալ մարդկանց ցավի նկատմամբ, որտեղ էլ որ նրանք արդեն: Օգնել մարդկանց՝ ճշմարտությունը աշխարհին հաղորդելով. սա է մարդու եւ ժուռնալիստի իմ պարտքը:

Վարդանի հետ մենք նույն արյունն ունենք, որովհետեւ նա էլ է միշտ ձգտում լինել այնտեղ, ուր դժվար է:

Երբ մեկ անգամ էլ հարցրի Վարդանին, թե ինչպես է նա գնահատում Ցվետանայի դերը իր ազատման գործում, նա ձեռքերը պարզեց եւ ժպտալով ասաց «Ամոթի չափ»:

Գուրգեն ԽՈՀՍԿՅԱՆ
19 հուլիսի, 1991

ՎԱՐԴԵՆԻՍ

Հայ մարտիկները պատրաստ են պաշտպանության

Վարդենիս տանող ճանապարհն ամենեւին չէր հիշեցնում, թե մի քանի տասնյակ կիլոմետր այն կողմ պատերազմական դրություն է, թե Կուր գյուղում մարզվող եւ իրենց հայրենիքը պաշտպանելու կոչված հայ մարտիկները արդեն մեկ շաբաթ է հսկում են սահմանը, որպեսզի ամեն րոպե հարձակման պատրաստ ազերի օմոնականները նորից ոչխարի հոտ չքշեն կամ չկրակեն մեր հովիվների ու հրնձվորների վրա:

Լրագրողներիս խումբը շրջկենտրոն ժամանեց կեսօրին եւ միանգամից տեղեկանալով օպերատիվ իրավիճակին, մեկնեց սահման: Մեզ ուղեկցում էին ներքին գործերի նախարարի տեղակալ, միլիցիայի գնդապետ Կառլեն Թորոսյանը, որը ղեկավարում էր Վարդենիսի տարածքում ՆԳՆ ստորաբաժանումները եւ Սեւանի ավազանի ՆԳ բաժինների վարչության-պետի ժամանակավոր պաշտոնակատար Ցական Խաչատրյանը:

Կուր գյուղը Վարդենիսի շրջանի սահմանամերձ վերջին գյուղն է: Ադրբեջանցիների գալուց հետո արդեն մեկ տարի է 1000-1200 հայ փախստականներ են տեղափոխվել եւ հիմնավորվել այստեղ: Սակայն այստեղ էլ հանգիստ չեն տալիս: Անասնագողության եւ հարեւանական նոպաներով կրկնվող հանակումները սթրեցին, որպեսզի հանրապետության ներքին զորքերից որոշ ջոկատներ տեղակայվեն սահմանամերձ գյուղերում: Կուրի հայ մարտիկների ջոկատը, որի քիվը հասնում է 60-ի, տեղավորվել է գյուղի ծայրամասի երկու լքված տներում: Այստեղ եւ՛ քնում են, եւ՛ ճաշում, եւ՛ անցկացնում զորավարժություններ:

«Ջոկատը պատրաստվելու է երկար ժամանակ,- *պատմում է Կ. Թորոսյանը,-* եւ եթե հանկարծ իշխանությունները մեզ առաջադրանքներ տան, մենք պատրաստ ենք կատարելու: Այսօր մեր գլխավոր խնդիրը զորավարժություններն են: Մենք արդեն 230 զինվոր ունենք, 20-ն էլ շուտով կժամանեն, կդառնանք 250: Այսպիսով, մենք հնարավորություն կունենանք դիմակայելու հակառակ կողմի հարձակումներին: Երեկ, հուլիսի 18-ին, ադրբեջանական Նարիմանլու գյուղի կողմից 3 կմ խորացան մեր տարածքում Ազատի մոտ եւ սկսեցին կրակել հայ հնձվորների վրա: Սակայն նրանք պատասխան ստացան: Նույնը կատարվեց նաեւ Զողում: Նրանց կողմից ինքնաթիռը 2 կմ մտավ մեր տարածքը եւ կրակեց պահակակետերի վրա: Հետեւեցին պատասխան կրակոցներ: Մենք նրանց զգուշացրինք, որ դուրս գան հանրապետության տարածքից, փոխարենը հնչեցին կրակահերթեր: Տղաները գործեցին բավականին հստակ եւ արագ: Մեր կողմից ոչ մի զոհ չեղավ, իսկ հակառակորդն ունեցավ կորուստներ եւ դուրս շպրտվեց: Մենք աշխատում ենք թույլ չտալ, որպեսզի սադրանքներ լինեն: Մեր բնակիչները պետք է լավ իմանան, որ եթե սահմանը խախտեն, հարձակվեն մեր գյուղերի վրա, զբաղվեն անասնագողությամբ, պատասխանը կստանան: Մենք ադրբեջանական կողմին բանակցությունների հրավեր ենք ուղարկել: Ինչպիսի՞ արդյունքներ ենք ակնկալում: Մենք նրանց բացահայտ հայտնելու ենք եւ զգուշացնելու, որ բոլոր կետերի վրա ունենք հսկողություն, եթե նրանք չհասկանան, կստանան մեր հակահարվածը, այդ դեպքում «մեղքն իրենց վիզը»: Առանց այդ էլ, իրենք տեղյակ են, որ վիճակն այժմ այնպես չէ, ինչպես 10 օր առաջ: Եթե մինչ այդ կարող էին հարձակվել, վնաս պատճառել ու հեռանալ, ապա այժմ դա բացառվում է: Հակահարվածը կստանան: Թե ինչ հետեւանքներ դա կունենա, թող իրենք պատասխան տան: Մեր համբերության բաժակն արդեն լցվել է:

Բացի Հայաստանից չի բացառվում նաեւ, որ օգնության շտաղենք Շահումյանի շրջանի մեր ազգակիցներին: Թող իմանան, որ իրենց առջեւ կանգնած են մարտական, այլ ոչ թե կամավորական ջոկատներ... Մեր գործողություններն օրինական են, քանզի մենք պաշտպանում ենք մեր հանրապետությունը»:

Հետախուզական ջոկատի հրամանատար Սպարտակ Նահապետյանն ավելացրեց. «Ցիտ է, մենք տեղավորվել ենք Կուրում, բայց այստեղ չենք լինում: Մի քանի օրվա ընթացքում կարողացել ենք Վարդենիսի շրջանի սահմանամերձ տարածքն ուսումնասիրել: Գիտենք, թե հակառակորդի կողմից ինչ ուժեր կան, որ տարածքում ինչքան մարդ կա, ինչքան տեխնիկա, թեւ հետախուզության ժամանակ Հայաստանի տարածքից դուրս չենք գալիս: Հետախուզությունները կատարվում են սարերի գլխից, հեռադիտակների միջոցով, որտեղից լավ երեւում են հակառակորդի ուժերը»:

Այնուհետեւ սկսվեցին զինավարժությունները: Տղաները ցուցադրեցին իրենց հմտությունները: Նրանց վարժ գործողությունները հույս են ներշնչում, որ մեր սահմանների պաշտպանությունը վստահելի ձեռքերում է:

Ու թեեւ այդ օրը ոչ մի միջադեպ չգրանցվեց, այնուամենայնիվ, շրջանում իրադրությունը շարունակում է մնալ լարված: Ոչ ոք չի կարող երաշխավորել, թե ինչ կլինի վաղը:

Գագիկ ՍՍՍՏՐՅՍԼ
հուլիսի 19, Վարդենիս - Երեւան

Հ. Գ. Գույժն սպասել չտվեց: Մեր վերադարձի հաջորդ օրը՝ հուլիսի 20-ի կեսօրին, Վարդենիսի շրջանում տեղակայված ՆԳՆ հատուկ նշանակության ջոկատի մարտիկները մեկնել էին սահման՝ կատարելու հերթական առաջադրանքը: Ջոկատայինների մեքենան դեռ չէր հասցրել մոտենալ անօրինական պահակակետին, երբ հնչեցին կրակոցներ: Մեքենան հազիվ կարողացավ շրջվել ու հեռանալ, բայց այս անգամ տալով զոհ: Հակառակորդի գնդակից զոհվեց միլիցիայի կապիտան, ՆԳՆ հատուկ նշանակության ջոկատի շտաբի պետ Գարեգին Բաղդասարյանը ■

digitised by A.R.A.R.@

Հայկական ցեղասպանութեան նուիրուած SLAUGHTER HOUSE PROVINCE գրքի հեղինակը հալածանքի ենթակայ

1989 թ. Մ. Նահանգներում հրատարակվեց ամերիկացի պատմաբան Սյուզան Բլերի գիրքը՝ Slaughter House Province («Սպանդանոց գավառ»), որը բովանդակում է ամերիկացի դիվանագետ Լեսլի Դեյվիսի վկայությունները Խարբերդի նահանգից ուղարկված Պոլսում այդ ժամանակ ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգընթաուին:

Ամերիկյան «Վաշինգտոն փոստ» թերթը, ինչպես հայտնում է ՀՀԴ-ի Քարտիզի պատասխանաթերթ «Կամք»ն իր Հուլիսի 13-14 համարում, որից եւ արտատպում ենք ստորեւ լույս տեսնող հոդվածը, հաղորդել է, որ գրքի հեղինակն ու նրա ընտանիքը 1989 թ. ի վեր բնակվում են անհայտ հասցեով, վախենալով թուրքական վրեժխնդրությունից:

Ամերիկեան «Ուաշինգթըն Փոսթ» օրաթերթը, կիրակի, 26 մայիսին անդրադարձած է Հայկական Ցեղասպանութեան նուիրուած Slaughter house Province գիրքին հեղինակ Սուզան Բլէրի հալածանքի ենթակայ վիճակի մասին, եւ եկած է այն եզրակացութեան, որ ամերիկեան ներքին ոստիկանութիւնը կարելիութիւնը չունի զայն պաշտպանելու մահուան սպառնալիքներէն:

Յօդուածագիր Փոլ Ֆարի կը գրէ, թէ հեղինակը եւ իր ընտանիքը 1989-էն ի վեր կը բնակին անյայտ բնակարանի մը մէջ, եւ միայն 5-էն 6 հոգի ճշգրտօրէն գիտեն անոնց բնակավայրը: Բլէր իր առած նախազգուշացումները արդարացնելու համար կ՚ըսէ. «Երիտասարդ մեռնելու իրօք չունիմ»:

Ան 15 տարիներ խմբագրած կամ հեղինակած է շարք մը գիրքեր, եւ յատկանշական է, որ գինք աշխարհէն հեռու պահող գիրքին իսկական հեղինակը ինքը չէ, այլ պարզապէս պատմութեան համար զայն կորուստէն փրկողն է: 1985-ին, երբ Միջին Արեւելքի պատմութեան շուրջ ուսումնասիրութիւն մը կը կատարէր, ան յայտնաբերած է Խարբերդի մէջ ամերիկացի անձնանօր դիւանագէտի մը՝ Լեսլի Դէյվիսի տեղեկագիրները, որոնք ականատեսի վկայութիւններ ունին 20-րդ դարու պատմութեան մէջ ամենատխուր վիճաբանութեանց նիւթ դարձած Հայկական Ցեղասպանութեան մասին: Դէյվիս թղթակցի մը ճշգրտութեամբ արձանագրած է հարիւր հազարաւոր հայերու սպանութիւնը, օսմանեան կառավարութեան ներկայացուցիչներուն կողմէ:

Ճիշտ է, որ համաշխարհային Ա. պատերազմին ընթացքին տեղի ունեցած այս սպանութեանց մասին ականատեսի վկայութիւններ շատ են, սակայն Դէյվիսի վկայութիւնները արժէքաւոր են, որովհետեւ անոնց ականատեսը չէզոք երկրի մը ներկայացուցիչն էր: 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը նկատուող դէպքերուն մասին Բլէրի կատարած յայտնաբերումը այս պատճառով զինք հայ-թուրք պայքարին մէջ կռուախնձորի մը վերածեցին:

Մինչ թրքական կառավարութիւնը չ՚ընդունիր ցեղասպանութեան իրողութիւնը, եւ կը յայտնէ, թէ 300 000-էն 500 000 հայեր մահացած են տարբեր պատճառներով, հայերը կը պնդեն, թէ ցեղասպանութեան ընթացքին մահացած են 1,5 միլիոն հայեր, եւ կը շարունակեն ճնշում բանեցնել Թուրքիոյ վրայ, որ ընդունի պատմութեան հայկական երեսը: Ցեղասպանութեան պատմութեան հայկական տարբերակը ընդունած է Արեւոյդ Թոյնբիի, Բարբարա Թուչմընի եւ այլ հանրածանօթ պատմագէտներու կողմէ: Անոնք նաեւ համաձայն են, որ հայերը ջարդուած են ոչ թէ ապստամբելու պատճառով (ինչպէս թուրքերը կը պատճառաբանեն), այլ արգելք հանդիսանալու, որ հայերը ռուսական բանակին նեցուկ չկանգնին:

Տարիներու թաւալումը շատ բան չէ փոխած այս հարցին մէջ, եւ տակաւին միայն անցեալ տարի Թուրքիոյ հանրապետութիւնը արգելք հանդիսացաւ ամերիկեան Ծերակոյտին ներկայացուած բանաձեւի մը վաւերացման, որ հայերը կը ներկայացնէր իբրեւ «ցեղասպանութեան զոհեր»:

Բլէր կը հաւատայ, որ ինք թիրախը դարձած է Դէյվիսի տեղեկագրին հրապարակման դէմ աշխատող թրքական խմբակի մը, որու նպատակներուն առաջինն արդէն իսկ ձախողած է, որովհետեւ այդ տեղեկագիրը հրատարակուած է: Գիրքին հրատարակումէն ետք իր կեանքին դէմ շարք մը ազդարարութիւններ եղած են, սակայն FBI-ը քննութիւններէ ետք եկած է այն եզրակացութեան, թէ անոր կեանքը «կարելի» վտանգի տակ է, եւ եթէ ան նոյնիսկ վտանգի տակ է, կազմակերպութիւնը կարելիութիւնը չունի զինք պաշտպանելու:

Ակնյայտ է, որ Բլէր թիրախ է զինք պաշտելէ կամ նման հրատարակութենէ մը հեռու պահել ուզող խմբակի մը, սակայն անոր հակազդեցութիւնը կարելի է չափազանցութիւն մը նկատել, եթէ անշուշտ գոյութիւն չունենար հեռաձայնի վրայ արձանագրուած բնակարանին մէջ ռումբի մը գոյութեան մասին կատարուած ազդարարութիւնը:



Յօդուածագիրը կը շարունակէ տեղեկութիւններ տալով Դէյվիսի եւ անոր կատարած պարբերական հաղորդումներուն եւ վերջապէս Խարբերդ իր երեք տարուան կեցութեան ընդհանուր տեղեկագրին մասին, որոնք փոխանցուած էին Թուրքիոյ մօտ Ամերիկայի դեսպան Մորգընթաուին: Յատկանշական է, որ հայկական ցեղասպանութեան մասին իր տեղեկագիրները յատուկ գնահատանքի արժանացած են, սակայն տեղեկագիրը երբէք հրապարակուած չէր եւ պահուած էր գաղտնի արխիւներու շարքին: Բլէր միայն արկածով մը գտած էր տեղեկագիրը, որէ օրինակ մը սրխալմամբ տարբեր արխիւի մը մէջ գետեղուած էր:

Յօդուածագիրը նաեւ կը պատմէ Բլէրի հետ իր կատարած հարցազրոյցին մասին, որու համար ան նախ խոստացած էր որոշ մանրամասնութիւններ դուրս ձգել իր հարցազրոյցէն: Ան Բլէրի ներկայ բնակարանէն 30 վայրկեան հեռաւորութեան վրայ տեղ մը ժամադրուելէ ետք, Բլէրի ամուսնոյն կողմէ, անուղղակի ճամբաներով հասած է անտառոտ շրջանի մէջ գտնուող բնակարանը: Յատկանշական է, որ զէնքի սեփականութեան դէմ դիրքորոշուած Բլէրն իր տան մէջ զէնքեր եւ գնդացիրներ կը պահէ ինքնապաշտպանութեան համար:

Անոնք այս միջոցին դիմած են, երբ Դէյվիսի տեղեկագրի յայտնաբերման մասին ամերիկահայ մամուլին մէջ հրապարակուած տեղեկութիւններէն ետք, կասկածելի անձինք սկսած են մօտենալ թէ Սուզանի եւ թէ անոր ամուսնոյն՝ Ռիչըրդի, եւ հարցումներ հարցնել Թուրքիոյ, օսմանեան կայսրութեան եւ ահաբեկութեանց մասին: Ուրիշներ սկսած են հետաքննել եւ նոյնիսկ նկարել զիրենք:

Այս բոլորին հետ մէկտեղ եւ հակառակ այն իրողութեան, որ ադրիլ ամսուան ընթացքին գիրքը հրատարակող ընկերութեան գրասենեակը յարձակումի թիրախ դարձած է, FBI-ը զանց չառնելով Բլէրի կեանքը վտանգի մէջ ըլլալու կարելիութիւնը, կը պնդէ թէ կարելիութիւնը չունի ֆիզիկական պաշտպանութիւն տրամադրել անոր:

Գիրքին հրատարակումէն ետք, Բլէր միայն մէկ անգամ հանրային ելոյթ ունեցած է, այդ ալ Ցեղասպանութեան 75-ամեակին նուիրուած հանդիսութեան մը, ուր ան ներկայացած է փամփշտարգել բաճկոնով: Ան կը յայտնէ, թէ սկսած է դանդաղ քայլեր առնել դէպի բնականոն կեանք վերադառնալու:

Թէ Ուաշինգթընի մէջ Թրքական հիմնարկի աշխատակից Հիթ Լաուրի եւ թէ UCLA արդի հայոց պատմութեան դասախօս Ռիչըրդ Յովհաննիսեան գործը հետաքրքրական համարած են, սակայն նկատած են, թէ ներկայ կացութեան մէջ մեծ փոփոխութիւն մը մտցնելու կարելիութիւնը չունին: Ինչպէս պրոֆ. Յովհաննիսեան ըսած է. «Թրքական հերքումները հիմնուած չեն փաստերու կամ անոնց չգոյութեան վրայ: Անոնք հիմնուած են քաղաքականութեան վրայ»: ■

Մշակութային լուրեր մշակութային լուրեր

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ. - Համազգայինի մասնաճիւղի գրական խմբակը կազմակերպել է հանդիպում ամերիկահայ գրող Հակոբ Կարապենցի հետ: Խմբակի պատասխանատու Սարգիս Մաճառյանը, ներկայացրել է Կարապենցի կյանքն ու գրական վաստակը, որից հետո գրողը խոսել է ամերիկահայ առաջին եւ երկրորդ սերնդի հայ գրողների մասին, շեշտելով, որ նույնիսկ երկրորդ սերունդը ձերբազատված չի եղել Սեծ եղեռնի ցավից: Վերջում նա պատասխանել է հարցումների:

ՊՈԼԻՍ. - Ղալաթիայի հայոց եկեղեցում մատուցվել է հատուկ պատարագ եւ հոգեհանգիստ Կեդրոնական վարժարանի առաջին տնօրէն՝ գրող եւ քաղաքական գործիչ Սինաս Չերազի մահվան 62-րդ տարեդարձի առթիվ:

ԲԵՅՐՈՒԹ. - Սահակյան-Լ. Մկրտչյան կոլեջի բակում, Քարամազի կիսանդրու առաջ, հունիսի 16-ին ոգեկոչվել է հնչակյան 20 կախյալների հիշատակը: Սարգիս Յարալյանի բացման խոսքից հետո ելույթ է ունեցել ՍՈՀԿ-ի Լիբանանի շրջանի ղեկավարներից եղիկ Եռեռճյանը եւ կենտրոնական վարչության անդամ Պեպո Սիմոնյանը:

ՆՈՐ ՋՈՒՂԱ. - Հունիսի 4-ին կամ 5-ին Ս. Ամենափրկչյան վանքի թանգարանից գողացել են արժեքավոր առարկաներ, Սպահանի եւ Հարավային իրանահայության թեմական խորհրդի հրապարակած հաղորդագրությունից պարզվում է, որ գողացված առարկաների մեջ կան եռիսկոպոսական 2 պանակ, 1 ոսկյա ակնազարդ խաչ, արծաթյա գոտու ճարմանդ, արծանիկներ, հնարժեք յուղանկարներ եւ 82 հին մետաղադրամ: Պետական իշխանությունները քննություն են ձեռնարկել:

ԹԵՀՐԱՆ.- «Սեւան» երգչախմբի հունիսի 9-ի համերգը նվիրված էր երաժշտագետ Ռուբեն Գրիգորյանի հիշատակին: Գուրգեն Մովսիսյանի ղեկավարած խումբը երգել է հայ եւ օտար երաժշտների գործերից՝ Թինա Հովսեփյանի եւ Մարո Տեր-Հարությունյանի նվագակցությամբ:

ՌՈՒՍԵ.- Բուլղարական այս քաղաքում «Երեւան» կազմակերպության սահուն հունիսի 1-ին եւ 2-ին, Լեւոն Փեհլիվանյանի ղեկավարած թատերախումբը ներկայացրել է Ալ. Շիրվանզադեի «Ազգային գործիչը»: Դերակատարներն էին Ս. Կյուրեղյանը, Կ. Հակոբյանը, Կ. Սարգսյանը եւ այլք: Ներկայացումը մեծ խանդավառություն է առաջացրել Ռուսեի հայ համայնքում, որը երկար տարիներից ի վեր զրկված էր թատերական կյանքից:

ԳԼԵՆԴԵՇ.- «Նոր սերունդ» մշակութային միության տարեսկզբի մայիսի 14-ից հունիսի 3-ը, մի շարք դասախոսություններ է կարդացել հայր Լեւոն Զեհիյանը՝ «Հայության գոյավիճակը իր ներին եւ արտաքին վերաբերիչներով, հոդ, ազգություն, սփյուռք» թեմայով: 7 դասախոսությունների համար նա հրավիրվել էր Լա Վեռնի ամերիկահայ միջազգային ֆոլեջ: ■

Մանոսկի եկեղեցին Գառզուի ոմանկարներով

Սեպտեմբերի 20-ին բացումն է կատարվելու հարավային Ֆրանսիայի Մանոսկի եկեղեցու ոմանկարների, որոնց հեղինակն է աշխարհահռչակ նկարիչ Գառզուն: Եկեղեցու ներսում 666 քառ. մետրի վրա նկարիչը ներկայացրել է մեր ժամանակների իր տեսիլքը, որ շուրջ մեկ տասնամյակի տքնաջան աշխատանքի արդյունքն է:

Այս առիթով լույս է տեսել ճաշակավոր կատալոգ, որի առաջաբանում Գառզուն խոսում է «իր հայտնության» մասին: ■

Անդրադարձ

Երուսաղեմի հայոց Պատրիարքը կոչ է անում ուխտագնացության

Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանը իր հոգեւոր եղբայրներին ուղղված մի կոչով հրավիրում է նրանց իրենց գտնված բեմերում եւ ծուխերում քաջալերել դեղի ս. Երուսաղեմ ուխտագնացությունը, որ վերջին տասնամյակների ընթացքում արարիսայելյան վեճի եւ նույնինքն Հայոց վանքում տիրող անառողջ մթնոլորտի հետեւանքով խիստ նվազել էր: Իբրեւ սուրբ տեղերում հայոց նոր պատրիարք, Թորգոմ Արքազանը հրավիրում է հայ քրիստոնյաներին դարձյալ մեծ խմբերով այցելելու Քրիստոսի ծնած, աղրած, խաչված եւ հարություն առած վայրերը, որտեղ հայկական Երուսաղեմն ունի տիրական ներկայություն:

«Հայաստանեայց եկեղեցւոյ կեդրոն ս. Էջմիածնէն-յետոյ, գրում է պատրիարքն իր կոչի մեջ, Երուսաղէմը երկրորդ կարեւոր տեղն է հայ քրիստոնեային համար»: Այդ շարունակում. «Երուսաղէմը լոկ գրաւաբերջիկութեան վայր մը չէ, այլ արքավայր մը, ուր հաւատացեալ քրիստոնեային հոգին կը նորոգուի Քրիստոսի նոր ուխտով»:

Պատրիարքի կոչին կցված եւ Հայոց վանքի տեղեկատու դիվանից հրապարակված մի տեղեկության մեջ խոսվում է այն մասին, թե Թորգոմ Արքազանն իր ընտրությունից ի վեր մեծ ուշադրություն է դարձնում Հայոց վանքի ներքին կյանքը վերադասավորելու, երիտասարդ միաբաններին կարեւոր գործեր վստահելու, ամեն բանում կարգուկանոն հաստատելու եւ պատրիարքության նյութական վիճակն ու հաշվեհամարները կարգի բերելու եւ ապահով ձեռքերում պահելու համար:

«Իր առօրեայ եւ վարչական գործերը դասաւորելէ եւ վերահսկելէ բացի, հաղորդում է տեղեկագիրը, Պատրիարք հայրը ոչ միայն գործ հայթայթած է երիտասարդ ու նուիրուած մասնագէտներու, այլ նաեւ հոգեւոր կրթութեան համար Երուսաղէմ հրաւիրած է շարք մը նոր հայ ուսանողներ մինչեւ իսկ հեռաւոր Ռումանիայէն եւ Ամերիկայէն»:

Տեղեկագրից պարզվում է, որ պատրիարքության հիմնական հարցերից է այդ ուսանողների, դասատուների եւ ուխտավորների համար բնակության վայր հայթայթելը, քանի որ Ալեք եւ Մարի Մանուկյան ընծայարանը կարող է ընդամենը մինչեւ 100 հոգի ընդունել: Սակայն, շարունակում է, Թորգոմ պատրիարքը լիահույս է, որ արդեն իսկ սկսված հանգանակությունները կարդյունավորվեն մեծ չափով, եւ այժմ վերակառուցվող վարդապետանոցի կողքին կկառուցվեն մյուս կացարանները: ■

Օրինակելի նվիրատվություն

«Ազգ»ի 17 հուլիսի համարում լույս էր տեսել Սիդնեյից (Ավստրալիա) ուղարկված մի կարճ թղթակցություն տեղի ՀԲԸ Միության Ալեքսանդր ամենօրյա վարժարանի բացման առթիվ: Դոկտ. եւ տիկին Ալեք եւ Իզաբել Ալեքսանդրների մեծագումար նվիրաբերումով կառուցված դպրոցի մասին խոսելով, թղթակիցը նշել էր նաեւ նույն համալիրում բացված «Գեմճյան» սրահի մասին, որի նվիրատուներն էին տեր եւ տիկին Վարուժան Իսկենդերյանները, բնականաբար առանց մանրամասնություններ նշելու:

Սակայն ես ցանկանում եմ անդայման բացել մանրամասնություններից մեկի կծիկը, հավատացած՝ որ այն օրինակելի կլինի մեր բոլորի համար:

1986 թ.-ին այցով գտնվելով Սիդնեյ, ներկա եմ եղել այն ընդունելությանը, որի ընթացքում հայտարարվեց գաղութի նահապետ՝ բժիշկ Ս. Ալեքսանդրի նվիրատվությունը՝ շուրջ կես միլիոն դոլար: Հրավիրյալներից շատերը, այնուհետեւ, կատարեցին իրենց սրտաբուխ նվիրատվությունները, որոնց բոլորի գումարով այսօր շքեղ իրականություն է դարձել նորաբաց վարժարանը: Եւ ահա բեմ բարձրացավ հերթական նվիրատուն՝ Սիդնեյում ոսկերչատան տեր Վարուժան Իսկենդերյանը, որն իր աշխույժ տիկնոջ հետ գաղութում հայտնի է ազգային-մշակութային արդյունավետ գործունեությամբ: Սակայն, նրա հայտարարած գումարը՝ 110 հազար դոլար, հաճելի զարմանք պատճառեց ներկաներին, ոչ միայն գումարի չափի համար, այլեւ...

Պրն. Իսկենդերյանը պատմեց նվիրատվության դրդապատճառի, ավելի շուտ՝ իր գաղտնիքի մասին: Անփող ու անգործ երիտասարդ էր նա, երբ շուրջ 20 տարի առաջ Միջին Արեւելքից՝ կարծեմ Հալեպից, հասավ Ավստրալիա՝ իր «աղգան օգտելու»: Բազում դժվարությունների հանդիպելուց հետո նրան օգնության հասավ Սիդնեյի հնաբնակ հայերից Գեմճյանը, իրեն տրամադրելով 40 հազար դոլար՝ «ոտքի կանգնելու համար»: Եւ ոտքի կանգնեց Վարուժանը, տուն-տեղ ստեղծեց, կազմեց հարաբերական ընտանիք, եւ այժմ, երբ վաղուց արդեն չկա իր բարերարը, ահա այս գիշեր բացում է ցարդ միայն իրեն հայտնի գաղտնիքը եւ հայտարարում նվիրատվություն՝ Գեմճյանի հիշատակին, տասնամյակներ առաջ նրա իսկ տված գումարին ավելացնելով դրամի արժեզրկման չափով եւ իր կողմից նրա վրա գումարելով արդեն զուտ իր՝ 10 հազար դոլարի նվիրատվությունը:

Եւ այսօր, Սիդնեյի ՀԲԸՄ-ի Ալեքսանդր Վարուժանի կողքին բարձրանում է «Գեմճյան» սրահը, իբրեւ անմոռանալի երախտիքի եւ օրինակելի նվիրատվության կոթող:

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Անգլիահայ համայնք

Լոնդոնահայ համայնքին նվիրված այս պատմական ակնարկը գրվել է 1990-ի վերջերին, երբ անգլիացի գործընկերներիս հրավերով գտնվում էի Մեծ Բրիտանիայում, որ բազմաթիվ հանդիպումներ ունեցա տեղի հայերի հետ:

Անձնական տպավորություններս բռնելով մի այլ հրապարակման, ստորև ներկայացնում եմ համայնքի համառոտ պատմությունը:

Բրիտանահայ համայնքը կազմավորվել է անցյալ դարի 30-ական թվականներից: 1835 թվականին Պոլսից, Իզմիրից, Տրապիզոնից հայերի փոքր ընտանիքներ են տեղափոխվել Անգլիա և հաստատվել Մանչեստրում, Լիվերպուլում, Սաութփորթում, Լոնդոնում, ակտիվ մասնակցություն են ունեցել այդ քաղաքների ներքին ու արտաքին առևտրում:

Մանչեստրահայ համայնք

Անգլիահայ համայնքի պատմությունն ընկսվում է Մանչեստրից: Միայն 1858 թվականին, այստեղ գործել են 15 հայկական առևտրական ընկերություններ, որոնց թիվը աստիճանաբար աճել է և 1895-ին հասել է 50-ի: Այդ տարիներին հայերը տիրապետել են հիմնականում կերպասի ճուկաներում: 1860-ականներին զարթնք է ապրել մանչեստրահայ համայնքի հոգևոր կյանքը: 1863 թվականի մարտի 31-ին Սուրբ Զատկի առթիվ, առաջին անգամ պատարագ է կատարվել Բանհոր փողոցում գտնվող մի վարձու մատուռում: 1869 թվականից սկսվել է և 1871 թվականին ավարտվել է Սուրբ Երրորդություն եկեղեցու շինարարությունը: Մանչեստրն ունեցել է նաև հայ մամուլ: 1863-64 թվականներին լույս է տեսել «Երկրագունդ» լրագիրը, 1898 թվականին՝ «Վաղվան ձայնը» հանդեսը, 1891 թվականին՝ «Հայ եկեղեցի» կրոնական և աստվածաբանական ամսաթերթը: 1952-1960 թթ. լույս է տեսել «Մեսան» լրագիրը:

ՀԲԸՄ-ի Լոնդոնի և Մանչեստրի ատենապետ Գաբրիել Սուլթանյանի վկայությամբ այժմ մանչեստրահայերի թիվը հասնում է 350-ի և միայն կեսն են, որ հայախոս են: Լոնդոնի և Մանչեստրի միջև եղած տարբերությունն այն է, որ վերջինում կուսակցություններ չկան: Համայնքային կյանքը վարում է եկեղեցու հոգաբարձությունը, որն էլ հոգում է թե՛ տեղի հայկական կենտրոնի ծախսերը, և թե՛ աջակցում հայանպաստ միջոցառումների կազմակերպմանը: Վեց տարի է, ինչ գործում է կիրակնօրյա դպրոցը, որ ուսուցանվում է հայերեն, հայ ժողովրդի պատմություն և երաժշտություն:

Մանչեստրում գործում է նաև Բարեգործական մասնաճյուղը, որը 1907-ին հիմնել է Աղա Թոմբերը: Հիմնադրումին անդամագրվել են մոտ 80 երեելի հայեր: Չնայած փոքրաթվությանը, մանչեստրահայ համայնքը ջանում է լինել Լոնդոնի համայնքից անկախ՝ պահպանելով միայն հորիզոնական հարաբերություններ:

Լոնդոնահայ համայնք

Լոնդոնահայերի պատմությունն ավելի ուշ է սկսվում: Հայ համայնքն այստեղ ձևավորվել է անցյալ դարավերջին: Տեղացի հայերը գաղթել են Կիպրոսից, Պարսկաստանից, Իրանից, Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից, Հնդկաստանից: Հնդկահայերն ավելի շատ են գաղթել, քան մյուսները, բայց վերջին տարիներին Մերձավոր Արևելքի հայտնի իրադարձություններից հետո մեծացել է նաև պարսկահայերի և բեյրութահայերի թիվը: Այժմ լոնդոնահայության թիվը տատանվում է 12-15 հազարի միջև:

Հայությունը հիմնականում կենտրոնացված է Լոնդոնի Իլինգ, Մազվել Հիլ, Չիզիկ, Քենսինգտոն շրջաններում:

Եկեղեցին

1885-ին Եսայի վարդապետ Աստվածատրյանի կողմից բացվել է Լոնդոնի առաջին մատուռը, իսկ 1922-ի փետրվարի 11-ին ազգային բարեր Գալուստ Գյուլբենկյանը հիմնադրել է տեղի առաջին հայկական եկեղեցին, որը 1923-ի հունվարի 11-ին օծվել է Ս. Սարգիս անունով: Գյուլբենկյանը եկեղեցին կառուցել է Լոնդոնի կենտրոնական թաղամասերից մեկում՝ Քենսինգտոնում: Այժմ էլ եկեղեցին գործում է, ունի իր խնամակալությունը: Գործում է նաև Ս. Պետրոս եկեղեցին, որը 25 տարվա դայմանագրով հայերը վերցրել են անգլիական կառավարությունից: Ամեն կիրակի, ժամերգությունից հետո հայերը հավաքվում են եկեղեցուն կից սրահի մեջ և մի բաժակ թեյի կամ սուրճի գավաթի շուրջ խոսում-քննարկում Հայաստանին և ընտիրությունի հուզող հարցերը, տեղեկանում հայրենիքից ստացված վերջին նորություններին:

Անգլիահայ եկեղեցին առաջնորդում է Տ. Եղիշե եպիսկոպոս Կիզիրյանը:

Բրիտանահայության համար անչափ կարևոր նշանակություն ունեցավ 1986 թվին համայնքային եկեղեցական խորհրդի ընտրությունը, որը Ս. Էջմիածնի կողմից հաստատվեց 1989-ի ապրիլին: Խորհուրդն ունի 23 անդամ և 7 անձից բաղկացած վարչություն: Խորհրդի դրեգիդենտը Եղիշե եպիսկոպոսն է, իսկ նախագահը՝ դոկտոր Արմեն Սահակյանը: Նորընտիր Ս. Պետրոս եկեղեցու բրիտանահայ համայնքային եկեղեցական խորհուրդը բաղկացած է բոլոր կուսակցությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներից: Այն համայնքի միակ ներկայացուցչական մարմինն է, որի գլխավոր նպատակը հայապահպանությունն է, գաղութի միասնականության ու համագործակցության ապահովումը: Գաղափարական տարբերություններ, իհարկե, նկատվում են նաև խորհրդի մեջ, սակայն ընդհանուր ձեռնարկներում բոլորը գործում են միասին: Խորհուրդն ունի նաև իր գործադիր մարմինը՝ որ հանձնախմբերով. կրթական, հարաբերությունների, մշակութային, տնտեսական, ազգային տուրքի և արձանագրության, եկեղեցական հոգեբարձության, խորհրդատու և տիկնանց օժանդակության:

Արցախի հարցի առթիվ խորհուրդը մի քանի անգամ նամակ է գրել նախագահ Գորբաչովին, խորհրդի անդամների հատուկ դատվիրակությունը հանդիպել է Մեծ Բրիտանիայում Խորհրդային դեսպան Զամյատինին, եղել են բազմաթիվ ցույցեր ու միտինգներ: 1988-ի դեկտեմբերյան երկրաշարժից հետո, որը համայնքը մեկ բռունցք դարձած հանգանակել է սննդամթերք, դեղորայք և այլ պարագաներ, որոնք ուղարկվել են աղետի գոտի: Հավաքված 3 մլն. Ֆունտ ստեռլինգով հայ համայնքը «Հայաստանի օգնություն» կոմիտեի միջոցով Կիրովականում կառուցում է երկաթգծի մանկական հիվանդանոց, որը շահագործման կհանձնվի 1991 թվականին: Նախագծի հեղինակը անգլիահայ ճարտարապետ Վահե Գյուլվանեսյանն է:

Հնչակյաններ

Հնչակյան շրջանակը ղեկավարում է սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցության Կենտրոնական վարչության անդամ, բանաստեղծ Մանվել Աղամյանը: Ինչպես պատմությունն է վկայում, դեռ դարավերջին ՍԴ Հնչակյան կուսակցությունը Լոնդոնում ունեցել է մեծ մասնաճյուղ, հրատարակվել է «Հնչակ» թերթը:

Վերջին 10-15 տարիներին, Լոնդոնի հնչակյան շրջանակը նորից «վերածնունդ» ապրեց: Հիմնադրվեց «Նոր սերունդ» մշակութային միությունը (նախագահ Նորայր Թորիկյան) և Հայ մարմնամարզական միությունը (Հոմենմեն): Անգլիական կառավարության թույլտվությամբ և տ. Մարիցա Սողանալյանի նվիրատվությամբ 1985 թվականին վարձվել է մի կիրակնօրյա դպրոց՝ իր սրահներով, լողավազաններով ու մարզական այլ կառույցներով: Այժմ սովորողների թիվը նվազել է, և մնացել է միայն մեկ դասարան: Հայ կենտրոնի կառուցումից հետո դպրոցն է նաև մշակութային միության այցելուների թիվը:

1987-1988 թվականներին Մանվել Աղամյանը հրատարակել է «Կոչնակ» երկաթաթերթը, որի էջերում մեծ տեղ է տվել Հայաստանում և Արցախում ծավալված իրադարձություններին:

Ռամկավարներ

Ռամկավար ազատական կուսակցության հիմնադրումից շատ առաջ, Անգլիայում գործել են հետագայում այդ կուսակցության մեջ միաձուլված Վերակազմիչ հնչակյաններն ու Սահմանադիր ռամկավարները:

1965 թվականին, մի նոր շրջան է սկսվել, երբ Ռամկավար ազատական կուսակցության երեք ներկայացուցիչներ՝ Սիրիայից, Պաղեստինից և Կիպրոսից տեղափոխվել են Անգլիա և հիմնադրել կուսակցության Միհրան Տամատյան ակումբը: Մեծ թափ է տրվել նաև Բարեգործականի աշխատանքներին: Ռամկավար ազատական կուսակցության Լոնդոնի մասնաճյուղի ատենապետ Կարապետ Եսայանը, 1969-79 թվականներին, Բարեգործականի հովանավորությամբ, առաջինն է Լոնդոնում Հայ տան մեջ բացել կանոնավոր հայկական դպրոց, որը գործել է մինչև կիրակնօրյա ազգային վարժարանի բացումը: Այնուհետև ՌԱԿ-ի հովանավորությամբ 1975-ին հիմնվել է Թեհլյան մշակութային միությունը, անգլիական կրթություն ունեցող հայ երիտասարդներին հայեցի դաստիարակություն տալու նպատակով:

10-15 տարի առաջ կազմավորվել է նաև «Թեհլյան ավանդը», որտեղ մեծ գումար է ներդրվել և այժմ դրանից ստացվող հասույթը օգտագործվում է զանազան նպատակներով, այդ թվում կազմակերպվում են Հայաստանից կոլեկտիվ խմբերի և անհատ ստեղծագործողների հյուրախաղեր: 1980 թվականին սկսվել է ՌԱԿ-ի «Էրեբունի» ազգային, մշակութային, հասարակական, սկզբում՝ ամսաթերթի, աղա երկաթաթերթի հրատարակությունը: Այն ունի հայերեն և անգլերեն էջեր: Սկզբում տպագրվել է Կանադայում, այժմ Լոնդոնում ստեղծվել է սեփական փոքրիկ տպարան, որտեղ իրականացվում է թերթի տպագրությունը: Թերթի վարիչը «Բուլվինոս Բեմիկ» հաստատության տնօրեն Վար-դան Ուզունյանն է, իսկ խմբագրական աշխատանքներն իրականացնում են խմբագիր դոկտոր Ա. Ծուլիկյանը և աշխատակից Ժ. Գեորգյանը:

ՌԱԿ-ը Լոնդոնում, ինչպես նաև մյուս գաղութներում, ունի Հայ իրավանց խորհուրդ, որը կարևոր աշխատանքներ է տանում հայ դատի և ընդհանրապես հայկական իրավունքների հետապնդման գործում, անգլիական խորհրդարանական, քաղաքական և քարոզչական շրջանակներում ազդեցության նպաստավոր ոլորտներ ստեղծելով:

Դաշնակցականներ

Դաշնակցությունը Լոնդոնում բացահայտ չի գործում: Աշխատանքները կատարվում են միությունների միջոցով. Հայ օգնության միության (նախագահ Մաթիլդա Մկրտչյան), Հայ մարմնակրթական ընդհանուր միության (նախագահ Հրաչ Պողոսյան), Համազգային կրթական մշակութային միության մասնաճյուղի: Այս կազմակերպություններն իրենց գործունեությունը ծավալում են Հայ կենտրոնում, որը բացվել է 1988-ի վերջերին: Կենտրոնի տնօրենն է Սիամանթո Կարապետյանը:

ՀՕՄ-ի հովանավորությամբ կենտրոնում բացվել է նաև ամենօրյա հայկական մանկապարտեզ: Շաբաթ և կիրակի օրերին Հայ կենտրոնում կազմակերպվում են ուրախ երեկույթներ, հանդիպումներ, թատերականացված հանդեսներ ու ճաշկերույթներ:

1984-ի հունվարին մի քանի ազգային բարերարների (Միհրան և Նազարեթ Ավագյաններ, Մանվել Սասունյան) հովանավորությամբ հիմնվել է շաբաթօրյա դպրոց, որը կառավարվում է ծնողների կողմից: Հայ հեղափոխական դաշնակցության անդամ Աղասի Ազիզյանը 1984 թվականից տնօրինում է այդ դպրոցը:

Ուսուցումը տարվում է արևելահայերեն և արևմտահայերեն դասագրքերով: Արդեն մեկ տարի է, ինչ լույս է տեսնում «Արծիվ» մանկապատանեկան ամսաթերթը:

Մեծ թվով երիտասարդներ են ներգրավված ՀՄԸՄ-ի մասնաճյուղում: Այդ մարմնակրթական կազմակերպությունը ունի 350 անդամ և կազմակերպում է սկաուտական դասընթացներ, որոնց ժամանակ ուսուցանվում են հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը:

Արցախյան շարժման առաջին իսկ օրերից ստեղծվել է նաև «Ղարաբաղի հանձնախումբը» Ռուբեն Կալիչյանի գլխավորությամբ: Լոնդոնում էլ, ինչպես մյուս համայնքներում, դաշնակցությունն ունի «Հայ դատի» հանձնախումբ, որի նախագահն է Ժորժ Բեճիրյանը: Հանձնախմբի աշխատանքները հիմնականում ընդգրկում են Հայոց եղեռնի և հայկական հողերի պահանջատիրության հարցերը: Վերջին տարիներին դրանց է ավելացել նաև Ղարաբաղի խնդիրը:

Լոնդոնահայերի նեստագրքահանդես, ՀԱՀՄ դեսպանատան առաջ

«Հայ Դատը» կարեր է հաստատում տեղի երեսփոխանների հետ, և իրենց օժանդակությամբ, հարկ եղած պարագայում միջնորդում է, որպեսզի հայկական խնդիրները հարմար տեղերում քննարկվեն: Անցած տարի, նման ճանապարհով, բրիտանական պառլամենտում անցկացվեց 2-3 հայանպաստ բանաձև: Նրման քաղաքական աշխատանքներ շարունակվում են մարդու իրավունքների պաշտպանության միջազգային տարբեր կազմակերպությունների հետ: Լոնդոնում գործում է նաև «Դաշնակցության երիտասարդական միությունը»:

Ազգային վարժարանը

Հայրենանվեր ազգօգուտ աշխատանք է կատարում նաև Գեորգ Թահիրյանի կիրակնօրյա Ազգային Վարժարանը, որի տնօրինուհին է տիկին Անահիտ Ղազարյանը: 1978-ին

Գեորգ Թահիրյան

ազգային բարերար Գ. Թահիրյանը 100 հազար ոսկիով (Ֆունտ ստեռլինգ) հիմնել է այս դպրոցը, որն իրեն կիրակնօրյա կրթօջախ՝ ունի իր մշակութային, ուսուցչական և ծնողական հանձնախմբերը:

Վարժարանում ուսուցանվում է հայոց լեզու, հայոց պատմություն, կրոն և երգեցողություն: Կան քսան դասարաններ, քսանմեկ ուսուցիչներ:

Հանդեսներ են կազմակերպվում նվիրված Թարգմանչաց Տոնին, Վարդանանց հերոսամարտին, ապրիլի 24-ին:

Ընդհանրապես, թե՛ այս վարժարանում, թե՛ մյուս երկու դպրոցներում ընդունված կարգ է. աշակերտների հետ ծնողներն էլ հաճախում են դպրոց և մինչ երեխաները սովորում են, նրանք զրուցում են իրենց հուզող թեմաների շուրջ, նախաճաշում են, զբաղվում տարբեր տեսակի խաղերով: Փաստորեն, դպրոցները միավորում են ոչ միայն երեխաներին, այլև նրանց ծնողներին:

Միսաք Օհանյանի Կենտրոնը

Լոնդոնահայ համայնքում ծավալուն և շնորհակալ աշխատանք է կատարում նաև Հայկական տեղեկատվության և խորհրդի կենտրոնը, որը 1987-ից ղեկավարում է Միսաք Օհանյանը: Նրա ղեկավարությամբ գործող «Քափիթալ տանը» տեղադրված կենտրոնը, պարբերաբար, հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակում է հայ համայնքին նվիրված տեղեկագրական ամսագրեր, որոնք թարմ լուրեր են հաղորդում համայնքի ազգային կազմի, նրա անդամների սոցիալական պատկանելիության և այլ տվյալների մասին: 1989-ի նոյեմբերից մինչև 1990 թվականի սեպտեմբերը Միսաք Օհանյանի ղեկավարությամբ գործել է նաև Լոնդոնի հայկական ռադիոժամը, որն այժմ չի գործում՝ ֆինանսական աջակցություն չունենալու պատճառով: Կենտրոնին կից գործում է հայկական մանկապարտեզ, կազմակերպվում են դասաժամեր և երեկույթներ՝ հայ տարեցների համար:

Մ. Օհանյանը 1978-ից մինչև 1988-ի վերջը հրատարակել է նաև «Կայծեր» ամսաթերթը, որն սկզբում եղել է Եռողայի հայ ուսանողների միության Լոնդոնի մասնաճյուղի, իսկ 1981-ից՝ Դեմոկրատական ճակատի օրգանը:

Աշակույթ

Հետաքրքիր է անցնում նաև լոնդոնահայության մշակութային կյանքը: Այն թեև հիմնականում հենվում է Հայաստանից եկած դերասանների, երգիչ-կատարողների, գրողների ելույթների վրա, սակայն հաճախ օգտագործվում են նաև համայնքային ինքնագործ ուժերը, օրինակ «Շանթ» թատերախումբը՝ Ժան Ֆարրայի ղեկավարությամբ:

Հետաքրքիր երեկոներ է կազմակերպում նաև կանանց «Անահիտ» միությունը, որ գործում է 1974-ից ի վեր:

Ի դեպ, տարիներ առաջ, լոնդոնահայ արխիվագետ տրն. Տիգրան Տիգրանյանի վկայությամբ Լոնդոնն ունեցել է ավելի կարևոր մշակութային-կրոնական և կրթական օջախներ, որոնց թիվը հասել է 72-ի, այդ թվում.

Հայ թատերական ակումբը (1979), Կոմիտաս գեղարվեստական մարմինը (1976-78), Կոմիտաս երգչախումբը (1960,1970), Հայկական երաժշտական ինստիտուտը (1978-79):

1611 թվականից մինչև 1985-ը Լոնդոնում լույս են տեսել օտարլեզու 131 գիրք՝ նվիրված Հայաստանին ու հայ ժողովրդի պատմությանը:

Յակոբ ՍՍՍՏՐՅՍՆ
Լոնդոն - Երևան

digitised by A.R.A.R.@

Թուրք-ադրբեջանական հարաբերությունները. 1990-1991

Բաքվի ձգտումը դեպի Անկարա

1990-ի հունվարը երջադարձային կետ էր Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների համար, յուրահատուկ լակմուս Ադրբեջանի հանդեպ Թուրքիայի վարած քաղաքականության: Մինչ այդ, Ադրբեջանն էլ այնքան համառորեն քայլեր չէր ձեռնարկում հարաբերություններ հաստատելու գործընթացն արագացնելու ուղղությամբ, որքան դրանից հետո, միանձնյա ուժեղ ղեկավարության պայմաններում:

Սակայն ի՞նչ ռեակցիա տվեց Թուրքիան 1990 հունվարյան դեպքերին:

ա. Արցախյան ճգնաժամը Թուրքիան լուսաբանում եւ մեկնաբանում էր 1988 փետրվարից սկսած՝ ըստ Մոսկվայի եւ Ադրբեջանի տեսակետի: Նա հասկացնել տվեց, որ կոնֆլիկտին չի միջամտի, եւ թեպետ ընդհանուր առմամբ համակրում է Ադրբեջանին, սակայն չի հավակնում դատավորի դիրք ընդունել այդ բարդ իրավիճակում: Սա փաստորեն չափազանց «դեմոկրատական» դիրքորոշում էր Թուրքիայի համար եւ թելադրված էր նրանով, որ Թուրքիան ուզում էր խուսափել գլխացավանքից այն իրավիճակում, երբ Եւրոտեսակայի մեջ մտնելու իր ցանկությունն առանց այն էլ հայերի պատճառով մերժվում է:

բ. Նախագահ Թուրգուտ Օզալը, որ այն ժամանակ գտնվում էր ԱՄՆ-ում, հայտարարեց, թե ադրբեջանցիները ճիա են եւ ավելի մոտ են Իրանին, քան Թուրքիային: Դրանով նա բացատրեց այն, որ Թուրքիան չի պատրաստվում քայլեր ձեռնարկել հօգուտ տանկերով տորված Բաքվի:

Այս հայտարարությունը ցնցեց Թուրքիան: Այն կտրուկ հակասության մեջ մտավ ցույցերի ելած զանգվածների, մեջլիսի մի շարք դեպուտատների, մի քանի մինիստրների, անգամ Ջենան Էվրենի, վերջապես, Թուրքիայում գտնվող ադրբեջանցիների վերաբերմունքի հետ:

գ. Բաքվի իրադարձությունները ուղղակիորեն կապվեցին ԱՄՆ-ի կոնգրեսում քննարկվող հայկական ցեղասպանության վերաբերյալ բանաձեւին: Այդ դիրքորոշումն արտահայտեցին մամուլի հեղինակավոր օրգանները:

«*Ջումհուրիյեթ*»-ի տեսաբան, ծագումով հրեա, երկար տարիներ Եւրոպայում ապրած Սամի Քոհենը բացատրեց, թե ինչ հետեւանք ունի Թուրքիայի համար հայ-ազերի հակամարտությունը: Թերթի 1990 թ. հունվարի 19-ի համարում նա հետեւյալ կերպ է վերլուծում իրավիճակը:

Երկրաշարժը եւ Բաքվի ջարդերը, որ եւրոպական մամուլում որակվում են «*պոգրոմ*» ռուսական բառով, եւ հատկապես այն, որ ազերիները տեղի-անտեղի սիրում են հոպարտորեն կրկնել, թե իրենք ծագումով թյուրք են, չափազանց ավելացրել են հայերի կրքոտ եւ «*այսպես կոչված հայկական ցեղասպանության*» (այդպես է Մեծ Եղեռնը անվանվում Թուրքիայում) բանաձեւի՝ ԱՄՆ Կոնգրեսի կողմից ընդունվելու հավանականությունը:

Նա գտնում է, որ հայասանյան մամուլի եւ աշխարհի հայկական լոբբիի միջոցով պանթյուրիզմի գաղափարի մասին հոդվածները հեղեղել են ոչ միայն Եւրոպայի մամուլը, այլեւ, որքան էլ զարմանալի է՝ սողոսկել են անգամ Մոսկվայի որոշ թերթեր, եւ աշխարհը խոսում է Օսմանյան կայսրության վերածնման «եռագանի» մասին, այս անգամ Բոսֆորից մինչեւ Մոնղոլիա...

Եւ այս բարդ իրավիճակում, երբ Թուրքիան խնդրողի դերում է Եւրոպայի առաջ, դեռ ազերիների ժող. ճակատն էլ աջակցություն է հայցում Թուրքիայից եւ Իրանից... Միակ հույսն այն է, որ ԽՍՀՄ կառավարությունը դրությունը կկայունացնի: Իսկ Թուրքիան, որ համակրում է, իհարկե, Ադրբեջանին, չի կարող իրեն թույլ տալ մասնակցել այդ ընդհարմանը. ընդհակառակը, պարտավոր է արագորեն վերացնել աշխարհում առաջացած անհանգստությունը իր թե վերածնվող «պանթյուրիզմից»:

Մեկ այլ հոդվածում Ս. Քոհենը միանում է Թուրքիայում տարածված այն կարծիքին, թե պետք է օրացույցից մի օր ընտրել եւ պաշտնապես նշել՝ որպես Թուրքիայում հայերի կողմից թուրքերի դեմ իրագործված ցեղասպանության օր, հակադրելով այն ապրիլի 24-ին եւ պահանջելով Ամերիկյան Կոնգրեսից վավերացնել այն: Չէ՞ որ անհրաժեշտ փաստաթղթերի պակաս չի զգացվում:

«*Միլլիյեթ*»-ը 1990-ի հունվարի 24-ի համարում ներկայացրեց Անկարայի Ադրբեջանական մշակութային ընկերության վերաբերմունքը Օզալի այն խոսքին, իբր «*ազերիներն ավելի շատ Իրանին են մոտ*»...

Ընկերության նախագահ Ֆեյզի Մխլուզյանը նշեց, թե Ադրբեջանում ոչ թե կրոնական, այլ ազգային գաղափար է, որ Ադրբեջանի թյուրիզմը առանց Թուրքիայի «տեր կանգնելու» եւ հովանավորության կփլուզվի: Նա ափսոսանք հայտնեց, թե մի մարդ, որ կարող էր Թուրքիայի անունից այդպիսի բան ասել, ընտրված է Թուրքիայի նախագահ: Նա նշեց, որ հանրահավաքներում ազերիները կրում էին Արաքյուրի կարգախոսները:

Օզալի արտահայտության դեմ նույնպիսի բարձր պաշտոնյաների միջեւ:

Ի՞նչ սպասելիքներ ունի Ադրբեջանը Թուրքիայից: Նախ՝ ցանկանում է ստանալ ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներ, բարդ մեքենաշինական արտադրանք եւ դրա արտադրամասերի նախագծեր՝ կառուցելու համար անհրաժեշտ գլխավոր հանգույցներ: Նման ցանկությունը ժողովրդի է առաջացնում թուրք մասնագետների մոտ, քանի որ, նրանց ասելով, Ադրբեջանը ցանկանում է էժան գնով Թուրքիայից ստանալ այն, ինչ ինքը Թուրքիան եւ ամբողջ աշխարհը ներմուծում են Եւրոպայից՝ այն էլ խնդրելով եւ հաճախ մերժվելով:

Թուրք հյուրերը համակրանքով, բայց եւ հեգնանքով են պատմում, թե ինչպես են իրենց ընդունում, ինչպես են անծանոթները հետաքրքրվում «վիզա» խնդրելով...

Ադրբեջանի՝ 90 տոկոսով դեռեւս կուսակցական մամուլը խանդավառ է նկարագրում Թուրքիայի հետ շփումների յուրաքանչյուր դեպք: Այսպես, Նիզամի Գյանջեւիի ծննդյան 850-ամյակի տոնակատարություններին Անկարայում մասնակցելու մեկնած ադրբեջանցի գրողների պատվիրակությունը, ըստ «*Բակինսկի ռաբոչի*» թերթի (հունիսի 25), արժանացավ փայլուն ընդունելության: Նրանց զեկուցումները լսելով՝ թուրք բանասերներն ասացին, որ շատ բարձր են գնահատում ադրբեջանական պատմաբանասիրական դպրոցի ավանդույթները, որ իրենք այդ բնագավառում սովորելու բան ունեն ադրբեջանցիներից, համագործակցության փայլուն հեռանկարներ են բացվում... Թուրքական թերթերը շատ ավելի զուսպ են Ադրբեջանի հետ կապերի զարգացման մասին գրելիս:

Մայիսին Թուրքիան եւ Ադրբեջանը փոխանակեցին պատմաբանների պատվիրակություններ: Ադրբեջանից մեկնածները պիտի մասնակցեին «*Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությանը*» նվիրված միջազգային գիտաժողովին, սակայն խորհրդային ՊԱԿ-ը խափանեց նրանց ելույթները («*Թերթման*», 16 մայիս 1991): Մինչ այդ, Մոսկվան արգելեց Ադրբեջանի վարչապետ Հասան Հասանովին Թուրքիայում գտնվելիս այցելել Հս. Կիպրոս, տեղի նախագահ Դենքթաշի հրավերով... Հունիսին փոխանակվեցին վիրաբույժներ, Թուրքիայից ժամանեցին էկոլոգները՝ Կասպից ծովի փրկության առեղծվածին նվիրված միջազգային կոնֆերանսին մասնակցելու, քաղաքագետները՝ «*Սոցիալ-տնտեսական զարգացումը եւ մարդու իրավունքները*» ադրբեջանա-ամերիկյան գիտաժողովին (հունիսի 28 - հուլիսի 2) մասնակցելու:

Վերջին փոխանակումներից էր կանանց կազմակերպությունների պատվիրակությունը, որ տիկ. Սեմրա Օզալի հրավերով ժամանեց Թուրքիա: Թուրքիայում պատվիրակությունը չէր կարող չայցելել «*հայ ահաբեկիչների ձեռքով նահատակված թուրք անվանի եւ պետական գործիչների հուշահամալիրը*» («*Բակ. ռաբոչի*», 19 հունիս 1991)... Նույն պատվիրակությունը վերջապես ստորագրեց 12 ադրբեջանցի ուսանող Թուրքիա ուղարկելու պայմանագիրը: Ուսանողների փոխանակումների մասին խոսվում է շատ վաղուց. համալսարանների միջեւ համագործակցության պայմանագիրը ստորագրվել է դեռ 1990-ի ամռանը, իսկ գործը նոր-նոր է տեղից շարժվում: Դա ցույց է տալիս Թուրքիայի դանդաղկոտությունը: Հիմնականում համատեղ գործարքները մնում են առանձին միջոցառումների մակարդակին, չնայած Բաքու - Անկարա մշտապես գործող իմնաթիռային, ավտոբուսային եւ բեռնատար կապին:

Նախիջեւան (Մաղարակ) - Թուրքիա մայրուղին կառուցվում է արագորեն, երեք կամուրջներից առաջինը գործի կանցնի տարվա վերջում: Հետաքրքիր է, որ Նախիջեւանը ձգտում է Բաքվի «գլխի վրայով» կապեր հաստատել Թուրքիայի հետ:

Ի՞նչն է, սակայն, պատճառը, որ չնայած բոլոր հիմքերին, անհատ տուրիստների մակարդակով կապերի հախուռն զարգացմանը, պետական համագործակցությունը դանդաղում է:

1. Թուրքիան պաշտոնապես, որպես տնտեսական եւ քաղաքական սուբյեկտ ճանաչում է ԽՍՀՄ-ին, իր հարաբերությունների զարգացումը Ադրբեջանի հետ դիտում է որպես ԽՍՀՄ-ի հետ կապերի զարգացման գործընթացի մաս:

2. Ադրբեջանի ողջ արտադրանքից առանց բարեփոխման, ներկա վիճակով Թուրքիային հետաքրքրում է միայն ստրատեգիական հումքը՝ բամբակը, նավթը, գունավոր մետաղները: Մինչդեռ, չնայած Ադրբեջանն առաջիններից մեկն է Կենտրոնից իրավունք ստացել վերանքարկել իրեն կենտրոնահպատակ ձեռնարկությունները, միեւնույն է, ստրատեգիական հումքի 80 տոկոսը գտնվում է Մոսկվայի տրամադրության տակ, եւ այդ հարցում Մոսկվան երբեք ինքնակամ «անկախություն» չի տա:

3. Ադրբեջանում չկան անկախ ձեռնարկատիրություն եւ այլ նախադայմաններ, որ վստահություն ներշնչեն Թուրքիայի ձեռնարկատերերին:

4. Օզալը, հանդիպելով ներքին ուժեղ դիմադրության, ելնելով իր միջազգային նպատակներից, չափազանց զգույշ է թյուրքիզմի հետ առնչվող ցանկացած հարաբերության հարցում:

Թուրքական դիտորդները նշում են, որ Ադրբեջանի գործարանների տնօրենները այնքան էլ խիստ չեն շահագրգռված արագացնելու կապերի հաստատումը, որքան երբ նրանք լինեին սեփականատեր: Առայժմ նրանք կատարում են սոսկ վերից իջեցված հրահանգները, սեփական շահ գրեթե չունեն:

Այդ է պատճառը, որ խոսակցություններն ու այցելությունները շատ են, իսկ գործը՝ հիչ: Պետք է աչակցել, հատկապես վարկեր տրամադրելու հարցում, սակայն՝ առանց խոստումներին կուլ գնալու, նշում է «*Հյուրրիյեթը*»:

Գնաց տեր-Գսարյան
արտաքին գործերի նախարարություն

Գործակցություն Սեւ ծովի շուրջ

Մոսկվայի եւ Անկարայի միջեւ տնտեսական գործակցությունը հիմնվել է 1983-ին՝ գազի համաձայնության վրա: Թուրքիայի ձեռք բերած գազը 1991-ին բարձրանալու է 5 միլիարդ խորանարդ մետրի եւ կարող է դարավերջին հասնել 10 միլիարդի: Ուսումնասիրվում է երկրորդ գազամուղի կառուցումը, որ կարող է անցնել Կենտրոնական Ասիայով, ոչ թե Բուլղարիայով: Խորհրդային Միությունն ստիպված է այդ հատույթի 70 տոկոսը գործածել թուրքական արտահանք գնելով, ինչը երկու երկրների միջեւ առեւտրական մեծ հարաբերություններ է ստեղծում, մանավանդ որ, թուրքական «*Էքսպորտ կրեդիտ բանկը*» Խորհրդային Միությանը տրամադրեց 1,1 միլիարդ դոլլար, երկու տարվա ընթացքում: Այդ գումարի 200 միլիոնը տրվեց այս մայիսի վերջին՝ սենդեղենի գնման համար: 1988 - 90-ին դեպի Թուրքիա խորհրդային արտածումները 443 միլիոնից բարձրացան 1,247 միլիոն դոլլարի, իսկ ներածումները՝ 271-ից 531-ի: Նախագահ Օզալի հայտարարության համաձայն, ընդհանուր առեւտուրը 1,8 միլիարդից, երկու-երեք տարում բարձրանալու է 5 միլիարդի եւ 10 միլիարդի՝ տասնամյակի վերջին: Թուրքական առեւտրական հաստատությունները մի շարք համաձայնություններ խրլեցին, եւ նրանք ծառայում են իրրեւ «փոխանցման կետ» օտար որոշ ընկերությունների համար, որոնք ծանոթ չեն խորհրդային շուկային:

Սեւ ծովի տնտեսական գործակցության ծրագիրը հրապարակ հանվեց եւ համակարգվեց Թուրգուտ Օզալի կողմից: Ծրագիրը համախմբում էր Խորհրդային Միությունը, որի առեւտրի կեսից ավելին անցնում է այս ծովով, Թուրքիան, Բուլղարիան եւ Ռումինիան:

Աշխատանքային բազմաթիվ նիստեր տեղի ունեցան Անկարայում, 1990-ի դեկտեմբերին, Բուխարեստում, 1991-ի մարտին, Սոֆիայում ապրիլին եւ Մոսկվայում հունիսին: Մասնագետները պատրաստեցին գործակցության մի շրջանակ, որը նախատեսում է դրամազրկի (կապիտալի) ազատ շրջանառություն, ապրանքների եւ մարդկանց, ինչպես նաեւ համակարգություն՝ վիճակագրությունների, հեռահաղորդակցությունների եւ բնապահպանության մարզերում: Եթե ամեն ինչ լավ ընթանա, ստորագրության հանդիսավոր արարողությունը տեղի պիտի ունենա Պոլսում, ամենաբարձր մակարդակով: Բանակցություններին Խորհրդային Միությունից մասնակցում են ռուսական, ուկրաինական եւ վրացական հանրապետությունները:

Օզալի Մոսկվա այցելությունն անցյալ մարտին, գազաթնակետին հասցրեց երկու երկրների մոտեցումը բարեկամության, բարի դրացիության եւ համագործակցության նոր դաշնագրի ստորագրմամբ, որը հաստատում է նախորդ համաձայնություններ, մասնավորապես այն, որ «*ճիշտ 70 տարի առաջ՝ 1921-ին ստորագրվել էր Մոսկվայում եւ ճշտում էր, թե Նախիջեւանը պիտի մնար ադրբեջանական հոգատարության տակ եւ չէր կարող զիջվել ուրիշ մի պետության*»:

Քաղված՝ «Լը Մոնդ դիպլոմատիք», հունիս 1991

digitised by A.R.A.R.@

Ղազախստանի խանը

Խորհրդային մի քաղաքագետ, որը վերջապես չի տատանվում

Ամերիկյան «Նյուզուիք» հանդեսի թղթակից Քերոլ Բոգերը զույգ հոդվածներով պատմում է Ղազախստանի եւ նրա նախագահ Նազարբաեւի մասին

Միխայիլ Գորբաչովը պետք է որ նախանձի նրան: Նուրսուլթան Նազարբաեւն այժմ լրիվ տիրապետելով կացությանը՝ վայելում է միաժամանակ եւ հասարակության պաշտպանությունը, եւ ազգամիջյան անդորրը:

Որպես Ղազախստանի նախագահ, Նազարբաեւը նոր երեւույթ է խորհրդային քաղաքականության մեջ: Նա խոսում է կարգապահության անհրաժեշտության մասին, որն էլ դուր է գալիս պահպանողականներին: Սակայն նրա սեփականաշնորհման ծրագրերը նախատեսում են արմատական փոփոխություններ կատարել տնտեսության բարելավման ուղղությամբ: Մեր առջեւ, վերջապես, խորհրդային մի քաղաքագետ է, որը չի տատանվում: Ասիական հանրապետությունների ղեկավարներից նա առաջինն է, որ արժանացել է համընդհանուր ճանաչման: *«Մարդկանց դուր է գալիս ժողովրդական բարեփոխությունների այն կուրսը, որին հետեւում եմ,»*- ասում է նա *«Նյուզուիք»*-ի թղթակցին՝ Ալմա Աթայում:- *Չնայած առայժմ ոչ մի գործնական արդյունքի չեմ հասել. մի բան, որ ինձ շատ է տանջում»:*

Այդ տանջանքը շուտով կարող է վերջ գտնել: Վերջերս Ղազախստանի խորհրդարանը հավանություն տվեց առաջիկա ամիսների ընթացքում պետական բոլոր տեսակի տները, խանութները ու ձեռնարկությունները վաճառելու Նազարբաեւի բանաձեւին: Նույնիսկ օտարերկրացիներին թույլատրվելու է բաժնետերեր դառնալ եւ հարկերից զուրկ ներդրումներ կատարել հանքերով հարուստ հյուսիսային երկու երջաններում:

Ղազախստանն այժմ բանակցություններ է վարում Շեւրոն կորպորացիայի հետ երկրի արեւմտյան մասում գտնվող Թենգիզի հսկայական նավթահանքերի շահագործման առընչությամբ: *«Նա գործի մարդ է,»*- ասում է ամերիկակորեացի տնտեսագետ Չան Յանգ Բանգը, որին Նազարբաեւը հրավիրել է Ալմա Աթա՝ որպես խորհրդատու:- *Ես շատ քաղաքականների եմ հանդիպել, բայց նրա նըմաններին՝ հազվադեպ: Նա լուրջ մտադրություններ ունի»:*

Նազարբաեւը որոշել է նաեւ թուլացնել Կրեմլի ազդեցությունը հանրապետության տնտեսության վրա: Ղազախական պաշտոնական տվյալներով Մոսկվան մինչեւ վերջերս վերահսկում էր տեղական արդյունաբերության 93 տոկոսը, սահագին վնաս հասցնելով երջակա միջավայրին: Խորհրդային ռոգման քաղաքականությունը, օրինակ, բառագիտորեն «քամում» է Արալյան ծովը՝ արեւմուտքում, իսկ Սեմիպալատինսկում տեղադրված միջուկային զենքի փորձագետների կենտրոնը ժառանգաբահարում է ամբողջ տարածքը՝ արեւելքում:

Նազարբաեւը հույս ունի Միութենական նոր պայմանագրի միջոցով փոխել դրությունը:

Ինքնիշխանությանն ուղղված քայլերը նրան անհարմար վիճակի մեջ են դրել՝ Գորբաչովի հետ իր հարաբերություններում: *«Ստալինգիական տեսակետից ես Գորբաչովին պաշտպանում եմ,»*- ասում է նա,- *սակայն ես գտնում եմ, որ նա մեղավոր է այն բանում, որ մարդկանց կյանքը գնալով վատանում է կարգուկանոնի բացակայության հետեւանքով: Հանրապետությունները չեն կարող սպասել Մոսկվային: Նրանք իրենք պետք է անմիջապես գործի անցնեն»:*

Բորիս Ելցինի հետ հարաբերություններն էլ շատ նուրբ են: Նազարբաեւը ողջունեց Ելցինի նախագահության հաղթանակը, սակայն այն հարցին, թե արդյոք լիովին վստահում է նրան, պատասխանեց. *«Դժվար հարց է»:*

Նա Ելցինին քննադատում է այն բանի համար, որ փետրվարին Գորբաչովի հրաժարականն էր պահանջում: Միաժամանակ նա շատ զգույշ է ազգամիջյան հարաբերությունների հարցում: Մեծ դժվարությամբ կարողացել է հաշտության եզրեր գտնել ղազախների եւ ռուսների միջեւ, որոնք երկուսն էլ հավասարապես հանրապետության բնակչության 40 տոկոսն են կազմում (մնացած 20 տոկոսը այլ ազգությունների խառնուրդ է): Հիշենք, որ Ալմա Աթան գորբաչովյան երջանի առաջին ազգամիջյան բախումների թատերաբեմը հանդիսացավ, երբ 1986-ին Կրեմլը մի անհայտ ռուսի նշանակեց կոմկուսի առաջնորդ: Նազարբաեւն այդ ժամանակ նախարարների խորհրդի նախագահն էր: Դրա համար էլ որոշ երջանակներում նրան քննադատում են: Բայց նա այնուհետեւ դատապարտել է ազգամիջյան հարցերում ուժի գործադրումը:

Նա Ելցինին չի հետեւում նաեւ կուսակցությունից դուրս գալու հարցում, եւ շարունակում է մնալ հանրապետության կուսակցության առաջին քարտուղար: *«Որպես նախագահ եւ առաջին քարտուղար ես անելու եմ կարելին, որ կուսակցությունը մնա լոկ քաղաքական ուժ»,* խոստանում է նա:

Նազարբաեւը չի թաքցնում իր հիացմունքը նույնիսկ վարչահրամայական ռեժիմի հանդեպ, պայմանով, որ այն կարողանա ամուր տնտեսություն ստեղծել: Հարգանքով է խոսում Հարավային Կորեայի մասին: Անցյալ տարի այցելելով այդ երկիրը, նա նշել է. *«Մեզ հետաքրքրում էր այն, թե նրանք ինչպես կարողացան հասնել այդ ամենին, ընդամենը 30 տարում: Հավատացած եմ, որ շուկան այնտեղ ստեղծվեց խիստ կարգուկանոնի առկայության պայմաններում միայն»:*

Նազարբաեւն այս ամիս ծրագրում է այցելել Չինաստանի ազատ տնտեսական գոտիները, որտեղ տնտեսական ազատությանը զուգընթաց «գործում» են քաղաքական ճնշումները: Ակնկալվում է, որ մինչեւ տարեվերջ Սինգապուրի նախկին վարչապետ Լի Կուան Յուն այցելի Ղազախստան:

«Եթե ժողովրդավարությունը գործարկեն նաեւ արդյունաբերության հոսքագծերում, ապա պետք չի ցանկանա աշխատել», ասում է նա իրավացիորեն:. Անցյալ աշնանը նրան հաջողվեց ընդդիմադիրներին համոզել, որ երկու տարով «սառեցնեն» քաղաքական տարաձայնությունները:



Սակայն տնտեսական հեղափոխության ճանապարհին «մեղրամիսը» կարող է երկար չտեւել: Ազգայնականների կարծիքով սեփականաշնորհումը կարող է շահութաբեր չլինել ղազախ ժողովրդի համար, որն առանձնապես մեծ փորձ չունի առեւտրի ասպարեզում:

«Մեր ժողովուրդը պատրաստ չի շուկայական հարաբերություններին,»- ասում է ակտիվիստ Սաբեթկազի Ակաբաեւը:- *Տասը տարի հետո մեր բոլոր ոչխարները ամերիկացիներին են պատկանելու»:*

Նազարբաեւը ժողովրդականություն չի վայելում նաեւ որոշ ոչ որակյալ աշխատողների երջանում, որոնք նրան համարում են նախկին այլասերված համակարգի խոստովանը: *«Նա ոչ մի դրական փոփոխություն էլ առաջ չի բերելու հոգուս մեզ՝ բանվորներիս»,* ասում է գործազուրկ Այբուլաթը, որն այդպես էլ իր ազգանունը չնշեց:

Մյուս կողմից նույնիսկ Նազարբաեւի պաշտոնները մեղադրում են կառավարությանը այն հարցում, որ բյուրոկրատները տակավին գրպանեցնում են իրենց նախկին պաշտոնները. *«Նրանք* (այդ բյուրոկրատները) *չեն եղել եւ երբեք չեն դառնա առեւտրականներ»,*- ասում է ընդդիմադիր օրենսդիր Պյոտր Սվոիկը:

Սեփականաշնորհման ենթակա պետական ունեցվածքի հաշվարկներ կատարելն ինքնին բարդ աշխատանք է: Եւ գուցե Նազարբաեւի ամենամեծ պրոբլեմն այժմ այն է, որ ինքը մենակ է:

■

Շեւրոնը Թենգիզյան նավթահանքերում

Ղազախստանի պաշտոնական շրջաններում այնքան էլ բարյացկամորեն չեն ընդունում այն փաստը, որ *Շեւրոնն* իրենց նավթահանքերը պետք է շահագործի: Հարցը բոլորովին էլ համաձայնությանը չի վերաբերում: Նրանք ողջունում են բազմամիլիարդ դոլլարների ներդրումը իրենց հանքերում, որտեղ ենթադրվում է, որ 25 միլիարդ տակառ նավթ կա: Այլ Մոսկվայի կողմից այն միջամտությունը, որ նրանք այլեւս չեն կարողանում տանել, համարելով դա իրենց անկախության դեմ ուղղված ոտնձգություն:

Կենտրոնի հետ սկզբնական շփումներից երկու տարի անց Նազարբաեւը հրավիրվել էր մասնակցելու բանակցություններին եւ ամեն ինչ կարգին էր թվում: Սակայն այժմ, երբ համաձայնությունն արդեն պետք է ստորագրվի, կենտրոնական մամուլի էջերում հայտնվում են հոդվածներ այն մասին, թե *Շեւրոնն* անարդար է վերաբերվում եւ անհամեմատ մեծ շահույթներ է ծեռք բերելու այդ գործարքից:-

«Փաստորեն պետությանի այդ հնացած ապարատը չի կարողանում հանդուրժել մեկուսացված լինելու հանգամանքը», ասում է Նազարբաեւը, որ միակ շահագրգռված անձը չէ: Գորբաչովը Լոնդոն այցելության ժամանակ ներդրումներ է պահանջելու Արեւմուտքից, իսկ Ջորջ Բուշը (որը հայտնի է նավթարդյունաբերության հանդեպ իր ունեցած մեծ շահագրգռվածությամբ) հավանաբար հետաքրքրվելու է *Շեւրոնի* հարցով, որն ամենամեծ համատեղ ձեռնարկությունն է Խորհրդային Միությունում: Այժմ խորհրդային մասնագետները ԱՄՆ-ում հանդիպումներ են ունենում *Շեւրոնի* պատասխանատուների հետ՝ կնճռոտ հարցերը կարելի եղածին չափ շուտ լուծելու համար:

Դժվար է ասել, գործարքն արդար է, թե ոչ: *«Սոմոու Նյուզ»* շաբաթաթերթի տվյալներով Խորհրդային Միությունը միլիարդներ է ներդնում այդ գործում, մինչդեռ ԱՄՆ-ը՝ ընդամենը մի քանի հարյուր միլիոն միայն, այն էլ վարկերով: *«Իսկ շահույթը նախատեսվում է բաժանել հավասար»,* բողոքում է թերթը:

Բայց *Շեւրոնն* իր հերթին «անձնգրհս» եւ «աղավաղված» է համարում այդ մեկնաբանությունը, նշելով, որ շահույթի այդպիսի բաժանումը պայմանավորված է ռիսկի այն բարձր աստիճանով, որ իրենք հանձն են առնում՝ ներդրումներ կատարելով ընդհանրապես Խորհրդային Միությունում եւ մասնավորապես Թենգիզի հանքերում:

Խորհրդային կողմը այլ առարկություններ եւս ունի: *«Շեւրոնը ժխտում է, որ ավելի լավ տեխնոլոգիա ունի, քան այն, ինչ մեզ է ներկայացնում: Մինչդեռ մենք համոզված ենք դրանում»,* ասում է փոխվարչապետ Վլադիմիր Շչերբակովը:

Նազարբաեւի կարծիքով ամերիկյան ընկերությունը սխալ չի վարվում: *«Ես համոզված եմ, որ նրանք միջազգային չափանիշներով են առաջնորդվում»,* ասում է նա եւ փորձում նավթարդյունաբերության նախարարությանը համոզել, որ անկողմնակալ մասնագետների հրավիրի քննելու այդ հարցը:

«Արեւմուտքում այդպիսի հարցերը իրավաբանների իրազեկությանն են հանձնվում,»- ասում է բանակցություններին մոտիկ կանգնած մի ամերիկացի: - *Այնտեղ դա բացակայում է»:*

Հենց սա էլ ամենամեծ խոչընդոտն է առաջիկայի հանդեպ Ղազախստանի ունեցած ձգտումներին:

■

Մեծ ցատկ դեպի... ետ

Պեկինը վերակենդանացնում է Մաոյի հիշատակը ժողովրդի պաշտպանությունն ապահովելու նպատակով

Վերջերս հաղորդվեց այն մասին, թե Մաո Ցզե Դունի մարմինը «հիանալի վիճակում է»: Ինչպես հայտնի է, Չինաստանի նախկին ղեկավարի մարմինը հողին էր հանձնվել Տիանանմեն հրապարակում՝ 1976-ին: Սակայն թթախնդրությամբ «մշակված» նրա մարմինը, բժիշկների հավաստիացումներով, կարող է դեռ լավ վիճակում մնալ մեկ-երկու դար:

Այս լուրը բավականին հանգստացրեց մարդկանց եւ ցրեց մտահոգություններն այն ընթերցողների, որոնք կարծում էին, թե Մեծ Առաջնորդի մարմինը... քայքայվում է: Որովհետեւ հիմա բոլորովին դրա ժամանակը չէ:

Չինաստանի կոմունիստական կուսակցությունը, որն այս օրերին տոնում է իր 70-ամյակը, մեծ հույսեր է կապում նրա հետ՝ ներկա ղեկավարության շուրջ համախմբվելու եւ համաժողովրդական պաշտպանություն ապահովելու տեսակետից: Հույսեր, որոնք ոչ մի ձեւով չեն կարող իրականացվել:

Չնայած երկրում լուրջ քաղաքական ընդդիմադիր ուժեր չկան, մահամերձ տնտեսությունն ու անդոյ ներկուսակցական տարաձայնությունները բնակչության մեծամասնությանը հասցրել են հուսահատության եւ բարոյալքության: Եթե մինչեւ հիմա կառավարությունը փորձում էր ոգեշնչել մարդկանց այնպիսի հերոսների օրինակով, ինչպիսիք են Լեյ Ֆինը (որի անձնազոհության ասիճանը հասնում է ընկերների... ներքնազգեստները լվանալուն) եւ Չիսո Յուլուն (որի պայքարը՝ մահամերձ վիճակում, հողի էրոզիայի դեմ, անգնահատելի ներդրում է համարվում), ապա այժմ կուսակցությունն իր ամբողջ հույսը դրել է Մաոյի վրա: Մի քանի տարվա հանմատական լռությունից հետո, նրա անվանը դարձյալ կարելի է հանդիպել ամենուրեք: Թերթերի խորագրերում, թատրոնների ցուցանակներում եւ գրքերի շապիկների վրա:

«Մաո Ցզե Դունը եւ նրա քարտուղար Տիան Չիայինը», եւ կենսագրական տվյալներ պարունակող այլ գրքեր այժմ վաճառվում են կայծակի արագությամբ: Պեկինի կինոթատրոնները հանդիսականներով (մեծ մասը կոլեկտիվ հայտերով) ողողված էին անցյալ շաբաթ, երբ ցուցադրվում էր *«Մաո Ցզե Դունը եւ իր որդին»* ֆիլմը, որը մի ուրցածմլիկ պատմություն է կորեական պատերազմի ժամանակ զոհված Մաոյի ավագ որդու մասին: Ֆիլմում, որն ընդգծում է Մեծ Առաջնորդի մարդկային հատկությունները, Մաոն ասում է. *«Մարդիկ կարծում են, թե մենք՝ կոմունիստներս, զգացմունքներից զուրկ ենք, բայց մենք այդպիսին չենք»:* Կինոթատրոնից դուրս եկող 53 տարեկան մի ինժեներ այսպիսի գրնահատական տվեց. *«Ֆիլմը շատ ազդեցիկ է եւ չափազանց ռեալիստական»:*

Աղետալի Մշակութային հեղափոխությունը Չինաստանում սկսեց այն ժամանակ, երբ Մաոն բողոքում էր, թե կուսակցության ղեկավարության հայացքները չափազանց սահմանափակ, իսկ մարդիկ ինքնավստահ ու գոռոզ են դարձել: Այս գնահատականը այսօր էլ նույնքան բնորոշ է կուսակցությանը, ինչքան այն ժամանակ:

1989-ին տեղի ունեցած ժողովրդավարությանն ի նպաստ ցույցերի ժամանակ Մաոյի դիմանկարով կոձակները ուսանողների երջանում դարձել էին նորաձեւություն: Դրանով նրանք իրենց բողոքն էին արտահայտում ներկա ղեկավարության այլասերվածության դեմ: Անցյալ տարի կառավարությունը փորձեց արգելել նմանատիպ ապրանքների վաճառքը՝ փոխարենն առաջարկելով ներկա ղեկավարությունը փառաբանող իրեր: *«Մաոյի կուլտը խիստ ճակատագրական կարող է լինել: Եթե անգամ թույլատրվի նրա պաշտամունքի վերազարթնումը, ապա այն անպայման հարկավոր է հսկողության տակ պահել»,* ասում է արեւմտյան դիվանագետներից մեկը:

Իսկ ովքե՞ր են, այնուամենայնիվ, ղեկավարում այս շարժումը Պեկինում: Գուշակություններից լավագույնը պետք է համարել այն, որ բարենորոգիչները ձեռ-ձեռքի տված պահպանողականների հետ, փորձում են փրկել կուսակցության վարկը, առնվազն նրա տարեդարձին նվիրված տոնախմբությունների այս օրերին:

Մաոյի «իմաստուն» մտքերով ողողված հոդվածները վերջերս անպակաս են թերթերում: Դրանք ծառայում են երկու ֆրակցիաների ղեկավարներին «ոգեւորելու», քանի որ նրանցից ոչ մեկը, ոչ էլ մյուսը չի կարող հարատեւելու հույս ունենալ՝ առանց հասարակության լայն խավերի պաշտպանության: Իսկ այդպիսի «պաշտպանություն» միայն Մաոն կարող է ապահովել:

Այնուհանդերձ, ոչ ոք չի ցանկանում կրկնել Մաոյի սխալները, իսկ այդպիսիք եղել են: *Հոնգ Կոնգ Չայնա Նյուզ Սերվիս* կիսապաշտպանական լրատվական գործակալությունը մայիսին ներկայացրեց ֆինանսական մի հաղորդագրություն, որով այդ ժամանակվա Մաոյի առաջ քաշած *«Մեծ ցատկ դեպի առաջ»* ծրագրի Չինաստանին հասցրած վնասը գնահատվում էր 116 միլիարդ դոլլար:

Քարի Գուսս

Էջի նյութերը քաղված են Newsweek, հուլիս 8-ի համարից

digitised by A.R.A.R.@

Մինչեւ վերջերս Մոսկվան համաձայն էր, թե Քաբուլում իշխանության գլուխ անցած կոմունիստներն առաջ են քաշվել աֆղան ժողովրդի կողմից, թե Խ. Միությունում կրթություն ստացած մի խումբ զինվորականների հեղաշրջումն իսկական հեղափոխություն էր, թե աֆղանական «հեղափոխության» համար երկրում կային բոլոր նախադրյալները, եւ ամեն ինչ կատարվել է օրենքներ գտնելու համար ամեն ինչ արվեց՝ գնդակահարվեց նախագահ Մոհամմադ Դավուդի ընտանիքը, Սվրոայի օրինակով պալատի դեմ-դիմացը դրվեց հեղաշրջման ազդարար առաջին տանկը, մեծ-մեծ-բոլոր-մեծ խաղերի պատճենումով հորինվեց խալղիս-փարչամիս հակամարտությունը: Սակայն, Խ. Միության ամենաժամանակակից ռազմական տեխնիկան անգամ չկարողացավ ապահովել Քաբուլի վարկաբեկված կոմունիստական վարչակարգի ժողովրդականությունը: Քաբուլյան հեղաշրջումից մեկ տարի հետո հաղթանակած Իրանի իսլամական հեղափոխությունը բնականաբար պիտի սպասեր իր ազգային եւ կրոնական դեմքը կորցնելու վտանգի առաջ կանգնած Աֆղանստանի 5 միլիոն շիա ազգաբնակչության արդարացի պայքարին: Իսկ իսլամական հանրապետության զորակցությունը շիա աֆղաններին, հաճախ կասեցվում էր Մոսկվայի կողմից: Ստորեւ ներկայացվող «Թեհրանի վարչակարգի խարդավանքները շիա աֆղանների պայքարի դեմ» խորագրով հոդվածը, որ լույս է տեսել Լոնդոնում հրատարակվող «Քեյհան» թերթի հունիսի 6-ի համարում, վերաբերում է Իրան-Աֆղանստան փոխհարաբերություններին եւ դրանցում Մոսկվայի գործուն մասնակցությանը: Համաձայն չլինելով հանդերձ հոդվածի հեղինակ Ֆ. Նուրիի հանգուցային տեսակետներին, որոնք ներկայացված են հակահրանական-հակաիսլամական ուղղվածությամբ, ելնելով որոշ փաստերի հետաքրքրականությունից, այն բարգմանաբար հանձնում ենք ընթերցողի ուշադրությանը:

Գ. ՍՈՍԹԵԼՅԱՆ

Իրան-Աֆղանստան փոխհարաբերությունները եւ Մոսկվան

1978 թ. ապրիլյան հեղաշրջումից հետո Քաբուլում իշխանության գլուխ անցած Նուր Մոհամմադ Թարաքիին Հավանայում կայացած չմիացող երկրների կոնֆերանսում զգուշացրեց Իրանի իսլամական հանրապետության արտգործնախարար Յազդիին, որ եթե Իրանը փորձի Աֆղանստանի կառավարության ընդդիմադիր ուժերին օժանդակել, Քաբուլը կդիմի պատասխան քայլի: Հարկ է նրբել, որ Թարաքիի նախազգուշացումը մեծ ազդեցություն ունեցավ այդ ժամանակ Իրանում աղաստանած աֆղան մուջահեդների նկատմամբ կիրառվող Թեհրանի քաղաքականության վրա: Յազդիի նախարարության ժամանակից սկսած, մինչեւ Ղորբզադեի նրբանակումը, Իրանի արտգործնախարարությունն Աֆղանստանի դեղերի վերաբերյալ հանդես չեկավ որեւէ հայտարարությամբ: Քաբուլում կոմունիստների իշխանության գլուխ անցնելու եւ աֆղան մուջահեդների հետ կապ հաստատելու վերաբերյալ հարցի քննարկմանն Արեւմուտքի ցուցաբերած բուռն ցանկությամբ հանդերձ, Իրանի հոգեւորականները թույլ չտվեցին որեւէ կապ հաստատել մուջահեդների հետ, համարելով, որ այդ կապը կարող է կախվածություն առաջացնել: Իսլամաբադում անցկացված իսլամական երկրների կոնֆերանսին աֆղան մուջահեդների մասնակցությունն ապահովելու համար, նախարար Ղորբզադեն նրանց ընդգրկեց իրանական հանձնախմբի կազմի մեջ, հակառակ դեղերում Պակիստանը թույլ չէր տա մուջահեդներին մասնակցելու կոնֆերանսի պատասխանատու հանդիպումներին:

Այն ժամանակ Արաբական լիգայի գլխավոր քարտուղար Հաբիբ Շաթթին, մշտական կապի մեջ լինելով Ղորբզադեի հետ, ցանկանում էր որեւէ բան ձեռնարկել աֆղանական դիմադրության օգտին: Նա, Իրանում մի քանի անգամ հանդիպել է շիա աֆղանների ապաստանող Այաթոլլահ Մոհսենի Ղանդահարին: Անշուշտ, Ղորբզադեի այդ քայլերը չէին կարող չնկատվել Խ. Միության կողմից: Վերջինս էլ իր գործակալների միջոցով անընդհատ «հաշվետվություն» էր ներկայացնում Իրանի կրոնական պատասխանատուներին, թե իբր Ղորբզադեն կրտսեր Ռզա Շահի օգնությամբ փորձում է տապալել Խոմեյնիի իշխանությունը: Թուդեհ կուսակցության ղեկավար Քիանուրին, որ լրտեսում էր Խ. Միության օգտին, մի քանի անգամ Ղորբզադեի հակակառավարական գաղտնի գործունեության մասին զեկուցագրեր է ներկայացրել Քաբուլի Սադրին:

Քաբուլում իրանական դեսպանատան գրավելուց հետո, դեսպանատան աշխատակիցներն ապրանքներով բեռնված երկու բեռնատար մերենաներով շարժվեցին դեպի Իրան: Հերաթի մոտակայքում ավտոբուսայունը անդիմեց աֆղան զինվորների եւ ռուս սպաների դիմադրությանը, որոնք բռնագրավեցին Իրանի դեսպանատան ապրանքները: Այնուհետեւ արտգործնախարարությունն Իրանի դեսպանատան աշխատակիցներին Մեշհեդ տեղափոխելու համար մեքենա ուղարկեց:

Խ. Միությունն ամենատարբեր եղանակներով աշխատում էր վերացնել Ղորբզադեին, դա հաջողվեց Մոսկվային: ՊԱԿ-ի ազդեցության տակ գտնվող «Ջումհուրի-է Էսլամի» կուսակցության միջոցով տարօրինակ իրադարձություններ վերազրվելուց հետո, նույնիսկ Խոմեյնիի զարմացական հայացքի առջեւ, տապալվեց Ղորբզադեի մահվան դատավճիռը: Նույն «Ջումհուրի-է Էսլամի» կուսակցության շարքերում գործող հոգեւորականներ Խ. Միության լրտես, նավաթեռ Աֆզալիին դարձրին Իրանի ռազմածովային ուժերի հրամանատար, եւ հենց նրա դատավարության ժամանակ նույն հոգեւորականները խոստովանեցին, թե ինչ-որ անձինք «Ջումհուրի-է Էսլամի» կուսակցության միջոցով երաշխավորել էին Աֆզալիին: Մոնքազարիի որդին, որ հայտնի է Մոհամմադ Ռինգո մականվամբ, նույնպես գտնվում էր ՊԱԿ-ի ազդեցության տակ: Որոշ ժամանակ անց, այդ դերն սանձնեց Մոնքազարիի փեսայի եղբայրը՝ Սեյյեդ Մեհդի Հաշեմին: Մոնքազարիի որդու նախաձեռնությամբ հիմնվել էր «Թոուհիդ» («Միասվածություն») անվամբ մի կազմակերպություն՝ աֆղան մտավորականների մասնակցությամբ: Փաստաթղթերի բանակի արտաքին շարժումների վարչությունում Մեհդի Հաշեմիի պատասխանատվության ժամանակ, Սեյյեդ Նաղավի Օռոզգանի անունով մեկ այլ աֆղան հոգեւորական, որը լրտեսում էր ԿՀՎ-ի օգտին ներգրավվեց Իրանում Աֆղանստանի քաղաքական հարցերով զբաղվող ոլորտում: Ի վերջո Խամենեիի եւ Հաշեմիի նախաձեռնությամբ եւ օժանդակությամբ վերը նշված անձանց մասնակցությամբ ստեղծվեց աֆղանական «Նասր» («Հաղթանակ») խմբավորումը: Հենց այդ ժամանակ էլ տեղի էր ունենում Աֆղանստանի հարցի քննարկումը: Խորհրդակցությանը մասնակցելու համար հրավիրվել էին սունիի մուջահեդներ, որոնց ղեկավարությունը գտնվում էր Փեշավարում, եւ շիա աֆղանների ղեկավար Այաթոլլահ Մոհսենի Ղանդահարին, որը բնակվում էր Իրանում: Դրանից հետո Իրանի ռուսամետ հոգեւորականների թեւը քարոզչական արշավ սկսեց շիա աֆղանների ղեկավար Մոհսենիի դեմ: Մեհդի Հաշեմին (քուդեական լրտեսները նրա ղեկավարած կազմակերպության բոլոր անդամների գործունեությունների մասին Մեշհեդի կոմունիստների կենտրոնի պատասխանատու Մեհդի Փարքովիի եղբոր Հադի Փարքովիի միջոցով տեղեկացնում էին ՊԱԿ-ին) դեմ էր աֆղանական հարցի քննարկման համար կազմակերպված խորհրդակցությանը Մոհսենիի մասնակցությանը՝ առանց Իրանի համաձայնության: Ոմն Մազարի, Փաստաթղթերի բանակի ցուցումով, Թեհրանում հրատարակվող «Ջավանան» հանդեսին տված հարցազրույցում արտահայտվեց Մոհսենիի դեմ: Հետագայում նույն հանդեսի գլխավոր խմբագիրը խոստովանեց, որ այդ սուտ հայտարարություններն արվել են Մեհդի Հաշեմիի հրահանգով: Ընդհանրապես Թեհրանի քաղաքականությունն աֆղանների, հատկապես շիա մահմեդականների նկատմամբ հիմնված է եղել կեղծիքի եւ անսկզբունքայնության վրա: Բանի Սադրի կողմից Մոհսենիին տրված մեկ միլիոն բուման օգնության մասին խոստումը դրժվեց Խամենեիի միջոցով, որից հետո արտգործնախարարությունում Աֆղանստանի գործերը հանձնվեցին Մոնքազարիին եւ Վելայաթիին:

Հաճախ Թուդեհ կուսակցության լրտեսները պետական հիմնարկներից գողանում էին շիա աֆղանների մասին փաստաթղթերը եւ հանձնում խորհրդային դեսպանատանը: Մի քանի անգամ էլ Մեշհեդի ՀԳԲ-ի (Օվիր) աշխատակիցները բոլոր փաստաթղթերով փախել են Քաբուլ:

Քանի դեռ խորհրդային ուժերը գտնվում էին Աֆղանստանում, Մոսկվան թույլ չէր տալիս Թեհրանին նույնիսկ արտահայտելու իր տեսակետները Աֆղանստանի մասին: Մուջահեդներին օգնելու մասին խոսելն իսկ ավելորդ է: Սակայն, ռուսների փախուստից հետո, Խ. Միության արտգործնախարարությունը Թեհրանին արտոնեց, որ Իրանում բնակվող շիա եւ սունիի աֆղանների բլոկը կանխելու համար միջոցներ ձեռնարկի: Շիա մուջահեդների եւ Վորոնցովի միջեւ Թեհրանում կայացած բանակցություններից հետո, Իրանի հոգեւորականները հավատացին, որ կարող են հաղթաթուղթը օգտագործել նաեւ այս պարագայում եւ Արեւմուտքից, հատկապես ԱՄՆ-ից կորզել որոշ արտոնություններ: Դրանից հետո, Վելայաթին իսկապես գործի անցավ եւ իր դրածոներից կազմեց «Վահդաթ» («Միասնություն») կուսակցությունը, որպեսզի հետագայում ավելի հեշտությամբ կարողանա օգտագործել նրանց: Նա նույնիսկ որոշ ֆինանսական օգնություն ցույց տվեց: Իրանի արտգործնախարարությունը, որ մի քանի անգամ բռնագրավել էր աֆղան գաղթականների համար նախատեսված գումարները, դրանք որպես Իրանի կողմից օգնություն տրամադրում էր իր կողմնակից մուջահեդներին: Երկու անգամ Ռուվեյքն օգնության ձեռք մեկնեց Այաթոլլահ Մոհսենիին, եւ երկու դեպքում էլ Իրանի պատասխանատուները դրամական միջոցով Թեհրան առաքվող գումարները բռնագրավեցին: Նրանք արդարանալու համար ասում էին, թե այդ միջոցները պետք է տրամադրել ոչ թե Մոհսենիի ղեկավարած «Իսլամական շարժում» կազմակերպությանը, այլ բոլորին՝ աֆղան գաղթականներին:

Թեհրանաբնակ աֆղաններն Իրանի արտգործնախարարությունում եւ փաստաթղթերի բանակում ՊԱԿ-ի գաղտնի գործունեության մասին տարօրինակ լուրեր են տարածում: Այժմ Թեհրանը մտադիր է ամեն կերպ հզորացնել իր հովանավորությունը վայելող «Վահդաթ» կուսակցությունը: Վերջինիս անդամները մի խումբ անվանարկված անձնավորություններ են, որոնք Աֆղանստանում զուրկ են հեղինակությունից: Քաղաքականապես եւ սոցիալապես անգրագետ ու տխմար այդ մարդիկ, որոնք բազում նվաստացումների են ենթարկվել Իրանում, ուզում են տնօրինել 5 միլիոն շիա աֆղանների բախտը:

Իրանի արտգործնախարարության կողմից ստեղծված «Վահդաթ» կուսակցության ղեկավար Մազարին, իրանական Մեշհեդ քաղաքում հանդիպել է կոմունիստ Նաջիբին (խոսքը Նաջիբուլլահի մասին է.- Գ. Ս.): Այդ կազմակերպությունը Վելայաթիի ցուցումով անհրաժեշտության դեպքում վարում է հակաարեւմտյան քաղաքականություն: Իրանի համաղասախան մարմինները շիաաֆղանների գործերը համակարգելու նպատակով, բազմիցս հորդորել են Այաթոլլահ Մոհսենիի ղեկավարության ներքո գործող Աֆղանստանի «Իսլամական շարժում» կազմակերպությանը՝ միավորվել «Վահդաթ» կուսակցության հետ:

Շեմիրանում, Իրանի արտգործնախարարության ստրատեգիական ուսումնասիրությունների գրասենյակում, Մոհսենիի հետ կայացած հանդիպման ժամանակ, Վելայաթիի տեղակալը նշել է, թե նախկինում Թեհրանի կողմից «Իսլամական շարժման» նպատակամբ գործադրված ճնշումները տեղի են ունեցել բյուրիմացաբար:

Վելայաթին, 1990 թվականին Իսլամաբադում Մոհսենիին հայտնել է, թե շիա աֆղանների նկատմամբ այսուհետեւ կիրառվի իրատեսական նոր քաղաքականություն: Սակայն այդ բոլորը խարկանք էր, եւ «Իսլամական շարժման» պատասխանատուները հասկանում էին, որ Թեհրանը ցանկանում է գործարքի մեջ մտնել շիա կրոնավորների հայտնի գործիչ Այաթոլլահ Մոհսենիի հետ, իսկ քանի որ 12 տարվա ընթացքում այդ բանը չընդունվեց, արտգործնախարարությունը, ներքգործնախարարությունը, բանակը եւ վարչապետարանը 1991 թվականի փետրվարին գաղտնի ժողով հրավիրեցին եւ կրոնապետ Խամենեիին համոզեցին Աֆղանստանի «Իսլամական շարժման» բոլոր ասյանները փակելու մասին հրամանն ստորագրել, որից հետո Իրանի հեռուստատեսությամբ հայտարարվեց. *«Աֆղանստանի իսլամական շարժումը լուծարվել է»:* ■

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑ

«Արցախը պետք է դառնա առանձին սուբյեկտ Միության կազմի մեջ»

Մեր սեռ. թղթ. Գայանե Աֆրիկյանը զրուցեց «Արցախ» հայրենակցական միության նախագահ Յուրի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ եւ վարչության անդամ Լենսեր ԱՂԱԼՈՎՅԱՆԻ հետ:

ՀԱՐՑ. Դուք դեմ էիք Գերագույն խորհրդի ընդունած վերջին որոշմանը:

ՅՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Մեզ համար, անկեղծ ասած, շատ մեծ հարված էր այդ որոշումը, որովհետեւ մեծ սպասելիքներ ունեինք Արցախի հիմնահարցի լուծման կողմակցությամբ: Ես կարծում եմ, որ այդ փաստաթղթով Հայաստանը լրիվ մի կողմ քաշվեց՝ մենակ թողնելով Արցախին: Մենք այս իրավիճակից դուրս գալու ելք ենք փնտրում: Իսկույն որոշեցինք մեր դիրքորոշումը, այն արտահայտեցինք հայտարարությամբ՝ ուղղված Գերագույն խորհրդին: Այդ փաստաթղթում հիմնականում ասում ենք, որ Հայաստանի կառավարությունը փորձում է ազատվել Արցախի հոգսից եւ կարծեցյալ անկախության գնալ՝ թերեւացած .տգով: Մենք եկանք այն եզրակացության, որ եթե Հայաստանը նկատի ունի, թե կազատվի կենտրոնի հարձակումներից, ապա դա ճիշտ չէ, որովհետեւ Մոսկվան չի թողնի Հայաստանին նույնիսկ Արցախից հրաժարվելու:

Հ. Այնուամենայնիվ, չեմ ուզում ասվածով, որ Գերագույն խորհուրդը հրաժարվում է Արցախից: Գուցե, պետք է փորձել նատկանալ հրանց:

Յ. Հ. – Հարցի ձեւակերպումը ուղիղ պատասխան է պահանջում, բայց բոլոր վերլուծությունները ցույց են տվել, որ գործողությունները իմիջիայլոց այդ են, նշանակում: Անկախ նրանից, թե ինչ ենք մենք ուզում, Աղրբեջանը երբեք չի գնա բանակցությունների:

Հ. Ձեր հետագա ծրագրերը:

Յ. Հ. – Անկեղծ ասած, շատ եմ դժվարանում, որովհետեւ իսկապես, այս որոշումը մեզ համար անակնկալ էր: Իհարկե, առաջին հերթին մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի սատար կանգնենք Արցախի մեր հայրենակիցներին: Ամեն գնով, ամեն ժամադարհով, ինչ էլ լինի:

ԼԵՆՍԵՐ ԱՂԱԼՈՎՅԱՆ. Ես գտնում եմ, որ այս հարցը զուտ քաղաքական հարց է, եւ այսօրվա մեր անհաջողությունները մեր քաղաքական ոչ ճիշտ դիրքորոշումների, կոպիտ սխալների արդյունքն են: Ցանկանում եմ շեշտել հետեւյալ փաստը. այն, ինչը հիմա հրապարակվում է, թե արցախցիներն ուզում են գնալ բանակցությունների՝ չի համաղասախանում իրականությանը: Այդ քաղաքականությունը մշակվել է Հայաստանում նոր կառավարության կողմից եւ օգոստոսի վերջից սկսած ստիպում է, որ Արցախն ինքը գնա այդ քայլին: Դեռ սեպտեմբերի վերջերին, Հայաստանի ԳԽ նախագահությունը ներկայացրել էր առաջարկություն, որպես որոշման նախագիծ (որը պետք է փետրվարի 18-ին ստորագրվեր), որ հստակ նշված էին այն կետերը, որ նրանք հիմա ընդունում են. Արցախը պետք է մնա Ադրբեջանի կազմում եւ այլն... Զարմանալին այն էր, որ երբ այդ հարցը քննարկվում էր, պարզվեց, որ Գերագույն խորհուրդը դրանից տեղյակ չէ, բայց չէ որ դա ստրատեգիական հարց է եւ առանց Գերագույն խորհրդի քննարկման, առանց ժողովրդի կարծիքը հարցնելու փաստաթուղթ ներկայացնելը չգիտեմ ինչպես կարելի է որակել: Դարձյալ հարցը մնում է Հայաստան-Մոսկվա հարաբերությունների հարց: Մոսկվան թույլ չի տա, որ Ադրբեջանն ու Արցախը գնան բանակցությունների, քանի դեռ Հայաստանը չի փոխել իր քաղաքական դիրքորոշումը: Մենք պետք է հաշվի նստենք այն բանի հետ, որ Հայաստանը ըստ Մոսկվայի ռուսական կայսրության տարածք է, այս առումով՝ հնարավոր է այնպիսի տարբերակ, երբ զորքի Հայաստանը առանց հայերի դուրսը: Ցանկացած ուրիշ տարբերակ նշանակում է գնալ առճակատման:

Հ. Ինչի՞ է հասել մինչեւ օրս ձեր միությունը:

Լ. Ա. – Մեր միությունը, ըստ էության, մինչեւ այս տարվա հունվարը զբաղվել է զուտ տնտեսական բարեփոխումներով. կոոպերատիվներ էինք կազմակերպում Արցախում, Գեղարքունիքում եւ այլն: Սակայն հարցի քաղաքական կողմին ուշադրություն չդարձնելը մեծ վնաս հասցրեց շարժմանը: Հունվարից հետո մենք հասկացանք, որ առանց քաղաքական դիրքորոշումների չի կարող լինել ոչ մի տնտեսական նվաճում: Դրա փայլուն օրինակը Գեղարքունիքն է, որտեղ, ըստ էության, բոլոր ներդրումները կորան: Այս տեսակետից «Արցախ» հայրենակցականն ավելի ակտիվ է: Իհարկե, պաշտոնապես քաղաքական կազմակերպություն չենք համարվում, բայց ըստ էության մենք վարում ենք ակտիվ քաղաքականություն: Պետք է ավելի լավ լուսաբանել այդ հարցը, որպեսզի թե՛ մեր դիրքորոշումը հստակ լինի, թե՛ կառավարության: Ի վերջո, սա այն հարցն է, որտեղ չի կարելի պահմտոցի խաղալ: Դրական լուծումն այն է, որ Արցախը պետք է դառնա առանձին սուբյեկտ Միության կազմի մեջ, իհարկե, հեռանկարում ունենալով դեկտեմբերի 1-ի որոշման իրագործումը: ■

digitised by A.R.A.R.@

Վրաստանում տնտեսական եւ քաղաքական իրավիճակը ծանրանում է

Վրաստանի նախագահի մամուլի ծառայության հայտարարությունը

Վրաստանի նախագահի մամուլի ծառայությունը հայտարարություն հրապարակեց, որով բողոք է հայտնվում հուլիսի 21-ին Թբիլիսիում տեղի ունեցած խորհրդային բանակի զինծառայողների գործողությունների դեմ:

Հայտարարության մեջ մասնավորապես ասվում է, որ հուլիսի 21-ին, ժամը 22-ի մոտ Թբիլիսիի կենտրոնում հայտնվեցին ավելի քան 60 զինվոր: Նրանք զինված էին երկաթե ձողիկներով եւ բանակային գոտիներով: Զինվորները վագրով ուղղվեցին դեպի վառելանյութի լցակայանը: Այնտեղ սկսեցին ջարդել մեքենաները, դուրս հանել քաղաքացիներին եւ ծեծել՝ բացականչելով. *«Սիա ձեզ ազատ Վրաստան»*:

Նույնպիսի ջարդեր տեղի ունեցան քաղաքային հանրախանութի եւ «Արագվի» ռեստորանի մոտ: Միլիցիայի հայտնվելուց հետո, զինվորները քաշվեցին Թբիլիսիի հրետանային ուսումնարանի զորանոցներում:

Ավերումների հետեւանքով ջարդվել են տասնյակ մեքենաներ, 8 հոգի տեղափոխվել են հիվանդանոց, որոնցից մեկը՝ անչափահաս:

Փաստաթղթում նշվում է, որ Թբիլիսիի հրետանային ուսումնարանի ղեկավարությունն առայժմ ժխտում է ջարդարարների դատապարտելությունն ուսումնարանին: Մինչդեռ հաջորդ օրը, տուժածները ճանաչեցին կուրսանտներից մեկին:

«Այսպես կոչված «անհնազանդ» հանրահավաքների տարածքում գտնվող խորհրդային բանակի ստորաբաժանումների զինվորների նման հարձակումները,»- նշվում է Վրաստանի նախագահի մամուլի ծառայության հայտարարության մեջ,- հանգեցնում են որոշակի հետեւանքների: Լիտվայում տեղի ունեցած զինվորների նմանատիպ գործողությունները ցույց են տալիս, որ այդ ակցիաները ծրագրված եւ ուղղված են այն բանին, որպեսզի առաջացնեն լայնամասշտաբ ընդհարումներ բանակի եւ բնակչության միջեւ»:

Վրաստանում ստեղծվել է տնտեսական ծանրագույն իրավիճակ

Վրաստանի Նախարարների խորհրդի նախագահ Թենգիզ Սիգուան հանրապետությունում ստեղծված տնտեսական իրավիճակն անվանեց «ծանրագույն»:

Հանրապետության նախարարությունների եւ գերատեսչությունների ղեկավարների, ինչպես նաեւ շրջանների ղեկավարների ընդլայնված խորհրդակցության ժամանակ Թ. Սիգուան տեղեկացրեց, որ Վրաստանը ենթարկվում է տաժանագույն շրջափակման կենտրոնի կողմից: Այսօր գործնականորեն չկան բենզինի պաշարներ, ստեղծվում են դժվարություններ աշխատավորներին աշխատավարձ վճարելու հարցում:

Ըստ վրացական վիճակագրական տվյալների, այս տարվա հունվարից ի վեր հանրապետության արդյունաբերությունը կրճատել է արտադրանքի բողարկումը՝ համադրելի մեծածախ գներով 25 տոկոսով, կամ որ նույնն է՝ 1 մլրդ 700 մլն. ռուբլով: Հանրապետական բյուջեի դեֆիցիտը այժմ գերազանցում է 2 մլրդ ռուբլին:

Վրաստանի ազգային գվարդիան սկսում է պարեկություն անել Թբիլիսիի փողոցներում

Վրաստանի ազգային գվարդիայի հատուկ նշանակության գունդը, որի կազմում կան երկու հազար մարդ, մոտակա օրերը կսկսի Թբիլիսիի փողոցների շուրջօրյա պարեկությունը:

Ինչպես հանրապետական հեռուստատեսությամբ հայտարարեց Վրաստանի ազգային գվարդիայի հրամանատար Թենգիզ Կիտովանին, այդպիսի միջոցները ձեռք են առնվել քաղաքում աճող հանցագործությունը խափանելու նպատակով: Նա տեղեկացրեց, որ միայն այս տարի հանրապետությունում սպանվել է 216 մարդ:

Համայն Վրաց պատրիարքը Վատիկան այցելելու հրավեր է ստացել Հռոմի Պապից

Կիրակի օրը Հովհաննես Պողոս 2-րդի անձնական խորհրդատու՝ Ջովանի Էսկալոն այցելեց Թբիլիսի: Նա Համայն Վրաց պատրիարք Իլյա 2-րդին հանձնեց Վատիկան այցելելու Պապի պաշտոնական հրավերը:

Թբիլիսիում 170 չգրանցված կոմերցիոն խանութ կա

Վրաստանի էկոնոմիկայի եւ Ֆինանսների նախարարության տվյալներով միայն Թբիլիսիում հայտնաբերվել է ոչ մի տեղ չգրանցված 170 կոմերցիոն խանութ: ■

Ադրբեջանի պատասխանատուն գնահատական է տալիս Վրաստանի հետ պայմանագրին

Բաքվում բրիֆինգի ժամանակ Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայության ղեկավար Օսման Միրզոեւը բարձր գնահատեց Ադրբեջանի եւ Վրաստանի նախագահներ Այազ Մութալիբովի եւ Զվիադ Գամսախուրդիայի՝ վերջերս Թբիլիսում կայացած հանդիպման արդյունքները: Ինչպես նշել է Միրզոեւը, *«այն կունենա աննախընթաց նշանակություն երկու կողմերի համար»*:

- Առաջին անգամ երկու հանրապետությունների փոխհարաբերություններում կնքվել է քաղաքական պայմանագիր՝ առանց կենտրոնի մասնակցության: Փաստաթուղթը ազդարարում է համամարդկային արժեքների գերադասությունը, ցուցադրում է երկու կողմերի վճռականությունը՝ միջազգային իրավունքի հիման վրա հարաբերություններ ստեղծել: Ադրբեջանը եւ Վրաստանը փոխադարձաբար ճանաչեցին պետական սուվերենությունը, տարածքային ամբողջականությունը, եւ մեկը մյուսի ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը,- նշեց Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայության ղեկավարը: ■

«Սպարտակ»ի նոր ծնունդը

Ամերիկյան Universal Ֆիրման, Ռոբերտ Ս. Հարիսի գլխավորությամբ, ձեռնարկել է վերականգնողական աշխատանքներ, հանդիսատեսին ներկայացնելու համար *«Սպարտակ»* Ֆիլմի նախնական տարբերակը, որ տեւում է 196 րոպե, Ֆիլմի էկրան բարձրանալուց երեսուն տարի հետո:

Այս երկրորդ ծնունդը հնարավորություն կտա հանդիսատեսին եւ քննադատներին նոր գաղափար կազմել, չնայած չորս Օսկարներին՝ ժամանակին սառն ընդունելություն



գտած այդ Ֆիլմի մասին: Հայտնի է, որ Սբենլի Կուբրիկը, որ այդ ժամանակ 32 տարեկան էր, «Սպարտակ»ը վերցրել էր Էնթոնի Մանի ձեռքից Քըրկ Դուգլասի հետ վիճելուց հետո, որը սցենարիստ էր առաջարկել Դալտոն Տրումբոյին՝ 1947 թ. ի վեր աշխատանք չունեցող «սեւ ցուցակի» անուններից մեկին:

Ֆիլմի հռչակավոր ճակատամարտը՝ 12 հազար կատարողներով, հղացել է գրաֆիկ Սաուլ Բասը: «Սպարտակ»ը շահել է զգեստների, դեկորացիայի, լուսանկարչական եւ երկրորդական դերի լավագույն կատարման (Պիտեր Ուստինով) օսկարները: Ֆիլմի նոր տարբերակը էկրան բարձրացավ հուլիսի 17-ին: ■

Կիրովական. քաղխորհրդի նախագահի մամլո ասուլիսը

Հուլիսի 17-ին, Կիրովականի երաժշտական ուսումնարանի դահլիճում տեղի ունեցավ մամլո ասուլիս՝ ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, Կիրովականի քաղխորհրդի նախագահ Հովհաննես Մաշինյանի հետ:

Ասուլիսին մասնակցում էին տեղական եւ հանրապետական թերթերի լրագրողներ, տարբեր կուսակցությունների եւ կազմակերպությունների լրատվական կենտրոնների ներկայացուցիչներ:

Հարցերը սուր էին եւ հրատապ՝ բնության պահպանության, աղտոտիչաբինության կանխման, բնակարանների բաշխման անարդյունավետ գործընթացի, գործարանի որոշ արտադրամասերի գործարկմանը հակադրվող քաղաքի գլխավոր հասակագծի մասին, ըստ որի, գործարանի տարածքում նախատեսված է ստեղծել կանաչ գոտի: Մեր այն հարցերին, թե ինչու հաշվի չառնվեցին հասարակական հարցման արդյունքները՝ քաղաքի Վանաձոր անունը փոխել եւ երկրորդ՝ նախագահն անձամբ նպատակահարմա՞ր է գտնում հանրապետության երրորդ քաղաքը նրա բաղամասերից մեկի անունով կոչել, պրն. Մաշինյանը պատասխանեց. *«Հասարակական հարցումը չկայացավ անհրաժեշտ մակարդակով, գոյություն ունեցող կանոններին համապատասխան: Պատգամավորների ձայները բաժանվեցին 4 մասի (Գուգարք, Բագրամ, Վանաձոր, Վանք): Ընտրվեց առավել շատ ձայներ հավաքած անունը: Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, ես միակ ելքը տեսնում եմ նրանում, որ Հայաստանի Գերագույն խորհրդում հաստատվելուց հետո կարողանամ հետզհետե ընտելանալ Վանաձոր անվանը»:*

Ս. ՄԿՈՅԱՆ

«Երկրաշարժային» խուճապ Թեհրանում

Կիրակի օրը երեկոյան ժամը 8-ին Թեհրանի ընդերքը չցնցվեց եւ հերքվեցին անհանգստացնող կանխագուշակումները, որը պնդում էր, թե հուլիսի 21-ին, ժամը 20-ին հզոր երկրաշարժի հետեւանքով ավերվելու է Իրանի մայրաքաղաքի կեսը, եւ զոհվելու են հազարավոր մարդիկ: Չկայացած երկրաշարժը հաստատեց նաեւ գիտնականների այն պընդումը, համաձայն որի, գիտությունը դեռեւս ի վիճակի չէ որոշելու երկրաշարժի վայրը, ժամանակը եւ ուժգնությունը: Սակայն, հակառակ Իրանի գիտնականների կողմից տրվող բազմաթիվ բացատրությունների, կիրակի օրը հարյուր հազարավոր թեհրանցիներ երեկոն անցկացրեցին քաղաքի զբոսայգիներում: Հազարավոր թեհրանցիներ էլ, օգտվելով *«շուրա, բասուա»* սգատոնի կաղակցությամբ հայտարարված արձակուրդներից՝ լքեցին Թեհրանը:

Ժամը 21-ին՝ նախատեսված երկրաշարժի պահից մեկ ժամ հետո, Իրանի հեռուստատեսությունը բացահայտեց այդ տարօրինակ եւ զգայացունց պատմության բոլոր մանրամասնությունները: Ըստ Իրանի հեռուստատեսության, ինքնակոչ մի երկրաշարժագետ եւ աստղագետ ձեռագիր նամակ է ուղարկում Պեկինի իրանական դեսպանատուն եւ հայտնում իր մտահոգությունը Թեհրանում սպասվելիք ահավոր երկրաշարժի մասին՝ նշելով անգամ ժամանակն ու ուժգնությունը: Դեսպանատան աշխատակիցները, որ շատ լուրջ էին ընդունել այդ լուրը, անմիջապես սկսեցին փրկել նամակի հեղինակին եւ լուրը հաղորդեցին Թեհրան, որտեղ թերթերում տպագրվելուց հետո, պարզվեց, որ խուճապի հեղինակը ոչ երկրաշարժագետ է, ոչ էլ աստղագետ: Նա ընդամենը աշխատում է Չինաստանի հեռավոր բնակավայրերից մեկի մեքենաշինական գործարանում որպես շարքային բանվոր: Նույնիսկ գործարանի ղեկավարության վրկայությամբ, հիշյալ անձնավորությունը փոքր-ինչ խելագարված է:

Պարզվում է նաեւ, որ այդ անձնավորությունը Լոնդոնին սպառնացող երկրաշարժի մասին մի նամակ էլ հանձնել է Պեկինում անգլիական դեսպանատուն, որը լուրջ չի ընդունվել:

Գ. Ս.

Լենինգրադի հոմոսեքսուալիստների եւ լեզբուհիների պահանջները

Հոմոսեքսուալիստներին, եւ լեզբուհիներին օգնող Լենինգրադի քաղաքային «Նեւսկայա պերսպեկտիվա» կազմակերպությունը դիմել է Լենինգրադի մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովին, կոչ անելով աջակցել իրավաբանորեն արձանագրելու լենինգրադյան սեքսուալ փոքրամասնությունների քաղաքային ընկերակցության կանոնադրությունը:

«Նեւսկայա պերսպեկտիվայի» դիմումում մասնավորապես ասված է, թե *«իշխանությունների քաղաքական պարտականությունն է բնակչության տվյալ դասին խտրականությունից պաշտպանելը, քանի որ նման մարդկանց համախումբը սոցիալական փոքրամասնություն է»*:

Օրինականացման դեպքում ընկերակցությունն առողջապահական մարմիններին երաշխավորում է քաղաքում եւ մարզում ՍՊԻԴ-ի տարածման կանխումը: ■

ԱՄՆ-ի շտաբների պետերի կոմիտեի նախագահի այցը ԽՍՀՄ

ԱՄՆ-ի զինված ուժերի շտաբների պետերի կոմիտեի նախագահ Քոլին Փաուելի՝ երկուշաբթի սկսված այցը ԽՍՀՄ անց է կացվում ռազմական ոլորտում երկկողմանի հարաբերություններ հաստատելու շրջանակներում:

ԽՍՀՄ գլխավոր շտաբի աղբյուրներից պարզ է դառնում, որ հուլիսի վերջին Մոսկվայում կայանալիք խորհրդա-ամերիկյան բարձր մակարդակի հանդիպման հետ այս այցը ուղղակի ոչ մի կապ չունի:

Փաուելն արդեն զրուցել է ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Միխայիլ Մոիսեեւի հետ, հանդիպել ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դմիտրի Յազովին: Բացառված չէ նաեւ նրա հանդիպումը նախագահ Միխայիլ Գորբաչովի հետ:

Ծրագրով նախատեսված է ամերիկացի գեներալի այցը Իրկուտսկ, Խաբարովսկ եւ Վլադիվոստոկ քաղաքները, ուր նա կհանդիպի խորհրդային բանակայիններին հետ: Այցի երթուղին կազմվել է Փաուելի ցանկությամբ: ■

Կրգզստանում հայտնաբերվել են ստալինյան շրջանի կարեւոր փաստաթղթեր

Բիշքեքի արվարձանի շրջակայքում, ուր ժամանակին զանգվածային թաղումներ են կատարվել, վերջերս հայտնաբերվել են հրաշքով փկված երեք մեղադրական եզրակացություններ՝ 30-40-ական թվականների թվագրությամբ:

Դրանցից մեկը ԽՍՀՄ-ում եւ արտասահմանում շատ լավ ծանոթ գրող Չինգիզ Այթմատովի հոր՝ Տորեկուլ Այթմատովի անունով է:

Ինչպես հայտնի է, մեծ գրողն այժմ Լյուքսեմբուրգում ԽՍՀՄ արտակարգ եւ լիազոր դեսպանն է:

Տ. Այթմատովը Կրգզստանի նշանավոր կուսակցական գործիչներից մեկն էր, որը մեղադրվել է բուրժուական ազգայնականության եւ սոցիալ-թուրանական կուսակցության (իրականում երբեք գոյություն չունեցած) պատկանելու մեջ եւ գնդակահարվել, ենթադրաբար, 1937-ի վերջին:

Կրգզստանի ՊԱԿ-ի աշխատակիցները առայժմ չեն տարածում այս ինֆորմացիան, սպասելով փորձագետների վերջնական եզրակացություններին եւ արխիվային աշխատանքի արդյունքին: ■

Ուկրաինայում բացվեց հրեական ամառային առաջին դպրոցը

Դոնեցկում հանդիսավորապես բացվեց հրեական ամառային առաջին դպրոցը, որը միակն է Ուկրաինայում:

Թիվ 23-րդ հանրակրթական դպրոցի հիմքի վրա, տեղական իշխանությունների օգնությամբ այն կազմակերպել է հրեական մշակույթի «Տրխիա» («Վերածնունդ») ընկերությունը եւ տեղի սինագոգը:

Երկամյա վճարովի դասընթացը, որը վարելու են Նյու Յորքից հրավիրված դասատուները, իր մեջ ընդգրկում է հեսեյալ առարկաները՝ պատմություն, փիլիսոփայություն եւ եբրայերեն ժողովրդի կրոնական ավանդույթները: ■

Օդեսայի կոմունիստները Շեւարդնաձեին մեղադրում են ուրացության մեջ

Օդեսայի երկրկոմի ու քաղկոմի համատեղ նիստում էդուարդ Շեւարդնաձեին անվանեցին գաղտնի հակակոմունիստ ու քաղաքական կարիերիստ: Տեղական «Կոմունիզմի դրոշ» թերթն իր էջերում զեղեղել է այդ հատուկ հայտարարությունը: Այնտեղ խոսվում է քաղբյուրոյի նախկին անդամի ուրացության եւ կրմկուսը քայքայելու նպատակասլաց գործունեության մասին:

Մինչդեռ Շեւարդնաձեն, երեկ, Իտալանդիայի արտգործնախարար Ջեյմս Ջերալդ Քոլինզի հետ հանդիպման ժամանակ ասաց, որ լոկ միավորված դեմոկրատական ուժերն են ի զորու չթողնել ծգնաժամի խորացում եւ երկիրը փրկել քաղաքացիական պատերազմի քաոսից:

«Մեզ մոտ միակ ելքը դեպի ձախ գնալն է, եթե երկրի նախագահը եւ կառավարությունը հենվեն դեմոկրատական ուժերի վրա», ասաց ԽՍՀՄ նախկին արտգործնախարար, ներկայումս Խորհրդային արտաքին քաղաքական ասոցիացիայի նախագահ Շեւարդնաձեն: ■

Հայտարարություն

«Նուբար» հայրենակցական միությունն իր առջեւ խնդիր է դրել զբաղվել Նուբարաշեն ավանի, ինչպես սոցիալ-տնտեսական, մշակութային-լուսավորական հարցերով, այնպես էլ Նուբարաշեն ավանում ելեկտրոնային կառուցմամբ:

Հարգելի հայրենակից.

Բարի եղեք ձեր նեղությունն ունենալ այս հայրենասեր գործին:

Մեր հաշվի համարն է երեւանի Օրջոնիկիձեի շրջանի Սոչին կոմերցիոն բանկ՝ թիվ 609018:

Բոլոր հարցերով դիմել միության վարչության նախագահ Տոլակ Շահինյանին:

Հեռախոսներ՝ 47-60-40, 47-60-41

Լուսանկարները interfax-ի եւ մեր սեփական թղթակիցների

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
phone: 58-1841, fax: (8-852)56-2941, telex: 243267 SULA SU

Խմբագիր՝ Հ. ԱՎԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN

Դասիչ՝ 69149

&Macintosh համակարգչային շարուածքը ՌԱԿ. ծանոյց եւ տեղեկատուության կենտրոնի

digitised by A.R.A.R.@